



ՍԵՐԳԷՅ
ՎԱՐԳԱՆԵԱՆ

ԱՐԵՒԱԾԱՂԻԿԸ



ԱՐԵՒԱԾԱՂԻԿԸ

© 1994

ARAS YAYINCILIK İTHALAT - İHRACAT LTD. ŞTİ.
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 465 / 205
80050 Beyoğlu - İstanbul
Tel: (0212) 252 65 18
Fax: (0212) 252 65 19
P.K. 498 Beyoğlu - İstanbul

Arevatzağığı Արևածաղիկը

Yazan Գրեց՝
Serkey Vartanyan Սերգեյ Վարդանյան

Doğu Ermenicesinden Batı Արևելահայերէնէն
Ermenicesine tercüme eden Արևմտահայերէնի վերածեց՝
Makruhi B. Hagopyan Մաքրուհի Պ. Յակոբեան

Resimleyen Նկարագարեց՝
Jibit Berberyan Ժպիտ Պերպերեան

Baskı ve Cilt Տպագրութիւն եւ կազմ՝
Format Matbaacılık Ֆորմատ Մատպատանըլըք

İstanbul Իսթանպուլ
1994 1994

ISBN 975-7265-02-0



ԱՐԵՒԱԾԱԳԻԿԸ

ՊԱՏՄՈՒԱԾՔՆԵՐ

ՍԵՐԳԷՅ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Արեւմտահայերէցի վերածեց՝
ՄԱՔՐՈՒՀԻ Պ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԻՆՉՈՒ ՓԱՓԱՔՆ ՈՒՆԵՑԱՅ ԼՈՅՍ ՀՆԾԱՅԵԼՈՒ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Ամէն ոք անխտիր կուգայ հաստատել թէ մեր իրականութենէն
ներս մեծապէս զգալի դարձած է մանուկներու յարմար ընթեր-
ցանութեան գիրքի պակասը:

Այս ստիպողութենէն թելադրուած, պրպտումներ կատարեցի,
գտնելու համար մանուկներու երեսակայութեան թոնչք պարզե-
ւող, բարոյախօսական բովանդակութեամբ, շինիչ և ուսուցո-
ղական պատմուածքներ:

Պրպտումներուս ընթացքին ձեռք անցուցի Հայաստանցի գրա-
գէտի մը՝ Սերգէյ Վարդանեանի «Արևածաղիկ» խորագրեալ
այս գիրքը: Երբ կարդացի, տեսայ թէ նպատակայարմար գիրք
մրն էր այս, և կ'արժէր որ գայն արևմտահայերէնի վերածէի:
Ահա այս նպատակակէտէն մեկնեցայ և հաճոյքով արևմտա-
հայերէնի վերածեցի այս գիրքը:

Այն պատմուածքները, որոնք տեղ գրաւած են այս գիրքին մէջ,
ընդհանրապէս կը շօշափեն մանուկներու և մանուկները շրջա-
պատող առարկաներու, անտառի և իր բնակիչներուն վերաբեր-
եալ նիւթեր: Կը գովերգեն բարին ու գեղեցիկը, ընկերասիրու-
թիւնը, կը ծաղրեն մեծամտութիւնն ու ծուլութիւնը:

Վստահ եմ թէ աշակերտները հաճոյք պիտի զգան կարդալով
այս գիրքը և թափանցելով պատմուածքներու մէջ թաքնուած
խորիմաստ թելադրութիւններուն:

Պատմուածքները գրի առնուած են գրական բարձր ոճով և
բանաստեղծական թոնչքով: Այս տեսակէտով կը հաւատամ որ
անոնք միևնոյն խանդավառութեամբ պիտի կարդացուին նաև
չափահաս ընթերցողներու կողմէ:

Այս առիթով կ'ուզեմ իմ խոր գնահատանքը յայտնել յարգելի
հեղինակին՝ Պրն. Սերգէյ Վարդանեանի, որուն ազնիւ թոյլ-
տուութեամբ է որ արևմտահայերէնով լոյս աշխարհ կուգայ այս
գիրքը:

Կ'ուզեմ իմ գնահատանքը յայտնել նաև տաղանդաւոր նկար-
չուհի Օր. Ժպիտ Պերպլեւանի, որ գեղեցկօրէն նկարագարող է
այս գիրքը:


Վերջապէս անհուն շնորհակալութիւն կը յայտնեմ «ԱՐԱՍ»
հրատարակչատան, որ ստանձնեց այս բազմածախս գրքին հրա-
տարակութիւնը:

ՄԱՔՐՈՒՀԻ Պ. ՅԱԿՈԲԵԱՆ



ՍԵՐԳԷՅ ՎԱՐԴԱՆԵԱՆ

Ծնած է 1952ին Երևան: Հեղինակ է մեկ քանի գիրքերու եւ անլի քան 200 յօդուածներու՝ նուիրում պատմութեան, քանասիրութեան եւ ազգագրութեան հարցերուն: Սերգէյ Վարդանեան լոյս րնծայած է «Հրեղէն Ջին» եւ «Հայոց Մայրաքաղաքները» գիրքերը, որոնք Հայաստանի եւ սփիւոքի կարգ մը դպրոցներուն մէջ կ'օգտագործուին ուսումնական նպատակներով: Իր աշխատակցութիւնը քերած է Հայաստանի մանկական մամուլին եւ մանուկներու համար ստորագրած է բազմաթիւ յօդուածներ ու պատմուածքներ: Այս պատմուածքներէն մեկ քանին տեղ գրաւած են սփիւոքի դասագրքերուն մէջ:



ՎԷՃԸ

- Փախէ՛ք ազատեցէ՛ք, փախէ՛ք ազատեցէ՛ք, դա՛ դա՛, թուա՛ր ա՛նտառի՛ն մէջ մե՛ծ աղմուկ հասնեց ազուար. աճա-
պարեցէ՛ք, փախէ՛ք, ազատեցէ՛ք, որսորդներ կան անտառի՛ն
մէջ, մի՛ տնտնաք, փախէ՛ք, փրկուեցէ՛ք...

Գազանները թուփերու տակէն, բացատաններէն, գիրար
հրմշտկելով խոյս տուին դէպի անտառներու խորքերը:
Թռչունները խումբ սու խումբ օդ բարձրացան, թռան գացին:

Ճիշդ այդ պահուն, գայլը դուրս ելաւ ծառի՛ն ետեւէն, բռնեց
աղուէսին վզէն, որ խուճապահար կը փախչէր, ու հարցուց.

- Ի՞նչ է պատահած, ինչո՞ւ իրար անցած ես...

- Որսորդներ մտած են անտառէն ներս, գի՛ս կը փնտռեն:

- Որսորդները ինչո՞ւ քեզ կը փնտռեն: Դուն ո՞վ ես որ անոնք
քու ետեւէդ անտառ եկեր են, ըսա՛ր գայլը:

- Հապա որո՞ւ համար են եկեր, զարմացա՛ր աղուէսը:
Անոնք եկած են իմ մորթիս համար...:

- Հա՛, հա՛, հա՛, խոստո՛ւ ու մտած ճաշկով խնդաց գայլը:
Ուրեմն ես՛ անտառի տիրակալս, քու կարծիքով ոչի՞նչ
կ'արժեմ որ որսորդները գիս թողած ինկեր են քոտոս
աղուէսի մը ետեւէն:

- Այո՛, ի՛մ ետեւէս:

- Գիտես ի՞նչ, եթէ դուն աղուէս ես, ես քու պոչդ եմ: Դիւրին
չէ խաբել գիս: Գնա՛ հա՛ւ մը գտիր, այդ հա՛ւը խաբէ, գայ-
րացա՛ր գայլը: Ե՛ս, ե՛ս եմ, որ ամբողջ ձմեռը այդ որսորդնե-
րուն գիւղին շուրջն եմ պտտած: Միսլն ե՛ս գիտեմ, թէ որքա՛ն
վնաս եմ տուած անոնց: Իսկ հիմա դուն կ'ըսես, որ ո՛չ թէ իմ,
այլ քո՛ւ ետեւէդ եկած են եւ անտառի մէջ ամբողջ այս
իրարանցումը ո՛չ թէ իմ, այլ քու պատճառով սկսած է:

- Այո՛, իմ մորթիս համար է որ որսորդները անտառ եկած
են, ի՛մ, ի՛մ մորթիս համար, ըսա՛ր աղուէսը:

- Ի՞նչ ըսել կ'ուզես, մենք մորթ չունի՞նք, մենք մե՞րկ ենք:
Գիւղի շուները քանի՛ քանի՛ անգամներ բուրդս գզած են,
բայց հակառակ ատոր, մարմնիս վրայ երկու աղուէսի
մորթին չափ բուրդ կայ տակաւին:

- Ո՛հ, մի՛ խնդացնե՛ր զիս, ըսաւ աղուէսը քթին տակէն խնդալով: Ամէն որ գիտէ թէ ամբողջ անտառին մէջ չկայ մէկը, որ իմ մորթէս անելի ընտիր մորթ ունենայ: Հարցո՛ւր, որո՛ւ որ կ'ուզես:

- Է՛յ, խուզուած խո՛զ, գոչեց գայլը փախչող վարագին, կա՛նգ առ վայրկեան մը ու ըսէ՛ թէ որո՞ւն մորթը անելի թաւ, անելի լաւ է:

- Վիճելու ատե՞նն է հիմա: Չէ՞ք լսեր շուներու ձայնը. ուր որ է որսորդները այստեղ պիտի գան, փախէ՛ք, քանի ուշ չէ տակաւին, ըսաւ վարագը եւ կորսուեցաւ ծառերու ետին:

- Ծիշո՞ղ կ'ըսէ, փախչի՛նք, ճշաց աղուէսը ու մէկ քանի քայլ առաւ, բայց գայլը պոչէն բռնած՝ ետ քաշեց գայլն ու ըսաւ.

- Վախցա՛ր, այնպէս չէ՞: Ո՞ւր կը փախչիս: Ըսէ՛, որ ի՛մ մորթս է անելի թաւ ու անելի լաւ:

- Ո՛չ, ի՛մ մորթս է, որ անելի լաւ է, ըսաւ աղուէսը:

- Թո՛ւ, բարկացաւ գայլը, եթէ կը պնդես, ուրեմն եկո՛ւր համբե՛նք, թէ ո՞վ է անելի թաւամագ:

Գայլը սկսաւ աղուէսի մորթին մագերը համբել, իսկ աղուէսն ալ՝ գայլին: Անոնք կը համբէին ու կը համբէին: Միս կողմէ, հետզհետէ անելի ու անելի մօտէն կը լսուէին որսորդներու շուներուն հաջոցները:

- ... Հագար հարիւր տասը, տասնըմէկ, տասներկու, կը հաշուէր գայլը, երբ շատ մօտէն լսուեցան շուներու հաջոցները: Այդ պահուն գայլը ցցեց իր սկանչները, դիտեց իր շուրջը եւ դառնալով աղուէսին, ըսաւ.

- Կը լսե՞ս, եկո՛ւր փախչինք...

- ... Ութ հարիւր երեսունըփինգ, երեսունըվեց...: Ի՞նչ կայ: Տեսար որ մագ չկայ մորթիդ վրայ, շուները որպէս պատճառ ցոյց կուտաս: Ըսէ՛ որ ի՛մ մորթս է անելի լաւը, ըսաւ աղուէսը:

- Ո՛չ բացարձա՛կապէս, երբե՛ք, ըսաւ գայլը, եւ անոնք շարունակեցին իրենց հաշիւը:

Ագոսար, որ այս ու այն կողմ կը թռչէր, կը զգուշացներ բոլոր կենդանիները: Ան տեսնելով աղուէսն ու գայլը, կանչեց.

- Հէ՛յ, ժամանա՞կն է վիճելու, փախէ՛ք ազատեցէ՛ք, շուները հասա՛ն...

Բայց գայլն ալ, աղուէսն ալ ուշադրութիւն չդարձուցին եւ

շարունակեցին համրել: Յանկարծ ծառերու ետեւէն դուրս
թուան որսորդներու շուները եւ անոնք գայլն ու աղուէսը
այնպէս գզեցին, անոնց բուրդը այնպէս հովին տոին որ
անոնք հազի հազ կրցան փախչիլ:

- Տեսէ՛ք թէ շուները որքա՛ն լաւ համրեցին ձեր մազերը,
պոտաց ագուար անոնց ետեւէն:



ԱՐԺԱՆԻ ԹԱԳԱԽՈՐԸ

Առիժը այնքան յաճախակի կերպով «կենդանիներու թագաւոր» անուանուած էր գրագէտներու կողմէ որ ան հաստատով իր այս տիտղոսին՝ օր մը որոշեց հաւաքել անտառի բոլոր բնակիչները, յայտնելու համար անոնց թէ՛ այնուհետեւ միայն ի՞ր արտօնութեամբ է որ պիտի շարժէին. ձագուկներ պիտի ունենային, բնակարան պիտի բնօրէին եւ որսի պիտի կլլէին: Երբ բոլոր կենդանիները հաւաքուեցան, Առիժը հպարտօրէն իր շորքը դիտեց ու րսաւ.

- Ինչպէս գիտէք, ե՛ս եմ կենդանիներու թագաւորը եւ ...

Առիժը միայն այսքանը կրցաւ ըսել, որովհետեւ անոր այս խօսքերը լսելով, կենդանիները սկսան հոհուալ, քրքջալ, պոռալ, ճչալ ու սղաղակել, տարօրինակ ձայներ արձակել, ծաղրել: Անոնք այնքան բարձրաձայն կը խնդային որ անտառը կը ցնցուէր: Կոպիկները խնդալէն կը մարէին եւ հագի կրնային մէկ ձեռքով կախուիլ ծառերու ճիւղերէն: Թռչունները կը կշկշային ու կը ճոռուլէին, իրենց կտուցները իրար կը զարնէին, կը թափահարէին իրենց թևերն ու սրչկըր ու փետրաթափ կ'ըլլային: Անոնց գոչնգոչն փետուրները տերևներուն հետ կը թափէին վար ու կը կուտակուէին ծառերուն տակ: Թռչնագոգիները խլացան ամբողջովին, ձուկերը կտրեցին իրենց ձայնը: Խնդալու հետեւանքով՝ կոկորդիլոսներու աչքերէն սկսան սրցունքներ հոսիլ, իսկ էշը սկսաւ զոսալ եւ թաւալիլ գետնին վրայ:

Մէկ խօսքով, օդի, ջրի ու ցամաքի բոլոր կենդանիները չափազանց գուարճացան: Առիժին՝ բերանը բաց մնացած էր զարմանքէն: Ան քանի մը անգամ մոնչեց եւ փորձեց վախցնել իր շորքիները, բայց անոնք սկսան սաելի գօրսւոր ձայնով խնդուք արձակել: Չորս կողմէն, կենդանիները մասնացոյց կ'ընէին Առիժը եւ կ'ըսէին իրարու.

- Նայէ՛, նայէ՛, կ'ըսէ թէ ի՛նք է կենդանիներու թագաւորը. հի՛-հի՛-հի՛, հա՛-հա՛-հա՛, խօ՛-խօ՛-խօ՛, հօ՛-հօ՛-հօ՛, խը՛-խը՛-խը՛, դը՛ժ-դը՛ժ-դը՛ժ, բը՛ժ-բը՛ժ-բը՛ժ, դը՛ժ-դը՛ժ-դը՛ժ, խը՛ն-խը՛ն-խը՛ն, բը՛ն-բը՛ն-բը՛ն, ի՛-ի՛-ի՛, հա՛-հա՛-հա՛ ...

Երբ կենդանիները քիչ մը հանդարտեցան, Փիղը հագի զսպելով իր խնդուքը, մօտեցավ Առիծին.

- Ուրեմն կ'ըսես թե կենդանիներու թագաւորը, այսինքն, նաե՛ւ մեր փիղերու թագաւորը դո՞ւն ես, հա՞. հա՛ -հա՛ -հա՛, դուն ուրեմն չե՞ս գիտեր որ ամէնէն ուժովը ես եմ, որ ե՛ս եմ կենդանիներու թագաւորը, ըսաւ Փիղը ու գոհունակութեամբ ականջները թափահարելով շուրջը նայեցաւ, սպասելով որ բոլոր կենդանիները հաւանութիւն յայտնեն իր խօսքերուն: Բայց կենդանիները երբ լսեցին Փիղին խօսքերը, ատիի բարձրաձայն խնդացին, աղմկեցին, ժխոր յարուցանեցին: Կապիկները խնդալու հետեւանքով ինկան ծառէն եւ սկսան իրենց երկու ձեռքերը շարժել իրենց ականջներուն շուրջ եւ ծաղրել Փիղին ականջներուն մեծութիւնը:

Փիղը բարկացաւ, իր ոտքերը զարկաւ գետին, կնճիթը վեր ցցեց եւ չափազանց բարձր ու զիլ ձայն մը արձակելով, փափաքեցաւ բոլոր կենդանիները լռեցնել, բայց այդ աղմուկ-աղաղակին մէջ Փիղին ձայնը հագի լսուեցաւ: Երբ խնդուքի ձայնը քիչ մը մեղմացաւ, Արծիւը թռաւ ու թառեցաւ Փիղին կոնակին վրայ եւ ըսաւ.

- Ո՞ր օրէն ի վեր դուն ամէնէն ուժեղ կենդանին ես դարձեր: Դուն հագի գերան մը կը քաշես քու ոտքիդ հաստութեան ծաւալով: Ի՞նչպէս կրնաս հինգ փիղ բարձրացնել: Տե՛ս, Սրջիւնը հակառակ որ այնքան փոքրիկ է, իրմէ հինգ անգամ մեծ ու ծանր Բզեզներ կը բարձրացնէ: Դուն ինչպէ՞ս կրնաս բոլորին թագաւորն ըլլալ, այսինքն թագաւորն ըլլալ հզօր արծիւներու, երբ մէկ մեթր իսկ չես կրնար թռչիլ: Ամօ՛թ, հագա՛ր ամօթ, ես այսպիսի արտայայտութիւն չէի սպասեր քեզմէ...:

- Դուն լողալ ալ չես գիտեր. ինչպէ՞ս կրնաս ձուկերու ու կոկորդիլոսներու թագաւոր համարուիլ, ըսաւ Կոկորդիլոսը՝ գլուխը ջուրէն դուրս հանելով: Ես քեզ երբեք չեմ տեսած ծովու մէջ լողալու ընթացքին: Տե՛ս, Գետաձին ալ քեզի նման հաստափոր ու հսկայ կենդանի մըն է, բայց տեսած եմ զայն ջուրին մէջ, իսկ քեզ, կը ներես, չեմ տեսած երբեք: Դուն գորտերուն իսկ թագաւորը չես կրնար ըլլալ:

- Գո՛ր-տերո՞ւ թագաւոր, գո՛ր-տերո՞ւ թագաւոր, սկսան կրկնել շարունակ Թութակները:

Փիղը չափազանց ազդուած իր հասցէին արտասանուած այս խօսքերէն. կախէց գլուխը: Իսկապէս, ան թագաւորի երեւոյթ չունէր բնաւ:


Այսպէս՝ բազմաթիւ կենդանիներ առաջարկ ներկայացուցին որ իրե՛նք ընտրուին որպէս թագաւոր: Վարագը կը պնդէր թէ որպէս թագաւոր պէտք է ընտրուի այն կենդանին, որ կրնայ շատ ուտել: Ծատեր համամիտ գտնուեցան Վարագի առաջարկին, բայց Ուղտը կտրուկ կերպով մերժեց այս առաջարկը: Սկիւռը առաջարկեց, որ թագաւոր ընտրուի ան, որ կրնայ սպրիլ խոռոչի մը մէջ եւ կրնայ ձմրան պաշար հաւաքել: Արջը համակարծիք չէր այս առաջարկին: Ան կ'ըսէր.

- Ի՞նչ պէտք կայ պաշար հաւաքելու, երբ կարելի է ձմեռը անցընել ընդհանրապէս բունի մէջ:

Իսկ Աղուէսը առաջարկեց թագաւոր ընտրել այն կենդանին, որ աւելի՛ աղուէս է: Թութակը փափաքեցաւ որ թագաւոր ընտրուի ան, որ աւելի՛ թութակ է: Օձը պահանջեց որ թագաւոր ընտրուի ան, որ աւելի՛ օձ է, Կապիկը՝ ով որ աւելի կապիկ է: Էշն իսկ առաջարկեց որ իրենց մէջէն ընտրուի ան, որ աւելի՛ էշ է:

Մէկ խօսքով, ամէն մէկը կը փափաքէր որ ինք կամ իր նմանը թագաւոր ընտրուի: Այսպէս, իւրաքանչիւր կենդանիի առաջարկէն յետոյ, բոլոր կենդանիները միաձայնութեամբ կը գոռային ու կը ծաղրէին: Իրաւ այ բոլոր կենդանիներու մէջէն չգտնուեցաւ նոյնիսկ միա՛կ կենդանի մը, որ կարողանար նոյն ատեն թէ՛ բարձր թռչիլ, թէ՛ լողալ մինչեւ ջուրին յատակը, թէ՛ սողալ, թէ՛ արագավազ ըլլալ, թէ՛ շատակեր ըլլալ, թէ՛ քառասուն օր չուտել: Ուստի, նկատի առնելով որ չկար կենդանի մը, որ այս բոլոր յատկանիշները կեդրոնացուցած ըլլար իր վրայ, որոշուեցաւ, որ Առիւծը մի՛այն առիւծներու թագաւորը ըլլայ. Փիղը՝ փիղերու, Արծիւր՝ արծիւներու, Աղուէսը՝ աղուէսներու, Էշը՝ էշերու, Կրիան՝ կրիաներու, Վարագը՝ վարագներու, Թութակը՝ թութակներու, Կապիկը՝ կապիկներու եւ այսպէս շարունակաբար...:

Եւ այս կարգադրութենէն ամէն որ գոհ մնաց, որովհետեւ ամէն ոք ունեցաւ իրեն արժանի թագաւորը:



ԿՕՇԻԿՆԵՐԸ

Աջն ու ձախը անբաժան ընկերներ էին եւ կարծես զիրար կը լրացնէին: Անոնք կը մտածէին որ մէկը առանց միւսին չէր կրնար գոյութիւն ունենալ: Բայց հետզհետէ անոնք սկսան դժգոհութիւններ ունենալ իրարմէ: Անոնք բանի կը հեռանային իրարմէ, այնքան կը նուազէր իրենց սէրը՝ իրարու նկատմամբ: Եւ ամէն մէկը կը կարծէր որ միւսն էր իր դժբախտութեան պատճառը: Աջ կօշիկը Չախը կը մեղադրէր, ըսելով որ եսասէր է ան, թէ միայն իր սեփական մորթին մասին կը մտածէ, զանազան առիթներով, կամ մասնաւորաբար ոտնազնդակ խաղալու ատեն միշտ Ա՛ջն է որ կ'ընդունի հարուածները, իսկ Չախը իր գլխուն համաձայն կը շարժի: Չախն ալ փոխադարձաբար կը մեղադրէր Աջը, կը պնդէր որ միշտ Ա՛ջն է որ ամէն բանի մէջ ինքզինք առաջ կը բշէ եւ չի թողոր որ Չախն ալ ցոյց տայ իր ընդունակութիւններն ու կարողութիւնները:

Առաւօտ մը, երբ տակաւին անոնց տէրը կը քնանար, Չախը ըսաւ Աջին.

- Ի՞նչ կայ որ միշտ առաջ կը նետուիս, ինքզինքդ միշտ Տիրոջ աջ ձեռքը, այսինքն աջ ոտքը կը կարծես: Տե՛ս անգամ մը վիճակդ, դուն այլեւս բոլորովին հիւնցեր ես, շնորհագորկ եղեր ես:

- Թո՛ւ պատճառով կեանքս մաշեցուցի, պատասխանեց Աջը բարկութեամբ: Փոխանակ ինձի շնորհակալ ըլլալու, կը համարձակիս քննադատել զիս:

- Ե՞ս կը համարձակիմ, պատասխանեց Չախը: Չե՞ս ամչնար այսպէս խօսելու: Ես քեզմէ մեծ եմ, դուն ինչե՛ր կ'ըսես:

- Դո՛ւն մեծ ես, խնդաց Աջը: Ի՞նչպէս մեծ ես եղեր, երբ մենք զոյգ ենք եւ իրարու նման:

- Այո՛, մեծ եմ. չէի՞ր գիտեր որ ձախ ոտքը միշտ աջ ոտքէն արելի մեծ է, ուրեմն ձախ կօշիկն ալ աջ կօշիկէն արելի մեծ կ'ըլլայ, եւ դուն պէտք է զիս յարգես, ինձի հնազանդիս:

- Ծիշդ ըսեր եմ. քո երեսդ իրական կաշի՛ է, կաշի՛, ըսաւ

Աջը: Ես այլևս չեմ կրնար քեզի հետ նոյն տան մէջ բնակիլ, ես կը վերադառնամ կօշկակարին խանութը:

- Վերադարձի՞ր տեսնենք, արդեօք քու երեսդ կը նայի՞ն: Այլևս ո՞վ կը հաւնի քեզի:

Աջը ատելի յուզուեցաւ եւ սկսաւ լալ:

- Լաւ, լաւ, ըսաւ Չախը: Ամօթ է, պզտիկ չես, արդէն քանասուն թիւ ես: Հանգստացիր քիչ մը, սրբէ երեսիդ սա արցունքներն ու փոշին, կապիչներդ ալ քակուեր են, կապէ՛ զանոնք: Այո, հիմա այսպէս ատելի գեղեցիկ դարձար:

Երբ Աջը քիչ մը հանգստացաւ, ըսաւ.

- Ի՞նչ օրերու հասանք, միևնչդեռ որքա՛ն գեղեցիկ երագներ ունէիկնք: Կը յիշե՞ս, հիսանալի հէքեաթ մը կար...:

- Ո՞ր հէքեաթին մասին է խօսքդ: «Կօշկակար կատո՞ւն», հարցոց Չախը:

- Ոչ, «Մոխրատոտիկը»: Ես շատ կը սիրէի այդ հէքեաթը: Հոն գեղեցիկ հերմուսի մը կար, Մոխրատոտիկին բիւրեղեայ կօշիկը: Ամբողջ կեանքիս մէջ փնտտեցի զայն, կեանքս մաշեցոցի, բայց զայն չկրցայ գտնել:

Դուրսէն լսուեցաւ հնահաւաքի մը ձայնը:

- Հիկեր կը գնեմ, հին հագուստնե՛ր, հին կօշիկնե՛ր կը գնեմ:

- Կը լսե՞ս, ըսաւ Չախը: Յատքէ պատշգամէն վար ու գնա հնահաւաքին քով: Անոր տոպրակին մէջ հագարումէկ կօշիկներ կը գտնուին, թերեւս քու փնտտածդ ալ անոնց միջեւ է: Հոս ի՞նչ կեցեր ես ուրեմն, գնա՛ եւ երագներուդ հերոսը փնտտէ:

Աջը լսեց եւ ոգւորուեցաւ, անոր հոգիին մէջ արթնցան հին օրերու երագանքները: Աջն ու Չախը ելան պատշգամ, ողջագորուեցան իրարու հետ, հրաժեշտ առին իրարմէ, եւ Աջը վար նետուեցաւ:

- Քո նմաններուդ վերջը ա՛յս է, ըսաւ անոր ետեւէն Չախը չար ժպիտով մը:

Հնահաւաքը վերցոց աջ կօշիկը, նետեց զայն իր տոպրակին մէջ եւ շարունակեց պոռալ:


- Հին հագուստներ, հին կօշիկներ կը հաւաքեմ, հին հագուստներ, հին կօշիկնե՛ր...

Չախը ուրախութեամբ վերադարձաւ սենեակ: Հիմա ան գոհ էր ու երջանիկ որ վերջապէս փրկուած էր Աջէն, եւ հիմա

ի՛նք պիտի ըլլար իր տիրոջ միակ սիրելին, տիրոջ միա՛կը:

Քիչ վերջ արթնցաւ կօշիկներուն տէրը, շատ փնտոեց իր աջ կօշիկը, ամէն անկիւն նայեցաւ, բայց չգտաւ: Պահարանէն հանեց իր նոր կօշիկները եւ հագաւ զանոնք, վերջն ալ աղբաման նետեց Չախը:

Հարկա՛ւ: Անգոյգ կօշիկը որո՞ւն գործին կը ծառայէր:



Ի՞նչն է, որ ԿԸ ԹՌՉԻ ԱՄԷՆԷՆ ԱՐԱԳ

Փոքրիկ Արամ կը փափաքէր մարախի բռնել խոտերու մէջէն: Ան ափը կը կտորցնէր, ուշադրութիւնը կը լարէր եւ յանկարծակի կը նետուէր մարախին վրայ, իսկ մարախը գսպանակի պէս ակնթարթօային շարժումով մը՝ կը ցատքէր դէպի ուրիշ տեղ: Արամ կրկին կը կտորցնէր իր ափը, դա՛րձեալ կը նետուէր դէպի առաջ, բայց մարախը մեծ ուտում մը ընելով դարձեալ կը թոչէր ու կը կորսուէր:

- Ամօ՛թ, ի՞նչ տեսակ տղայ ես որ մարախ մը իսկ բռնել չես գիտեր, ըսաւ Արամին բոչրը՝ Արմենունիին:

- Ո՛հ, այնքան արագօրէն կը թոչի որ... ինքզինքը արդարացնել ջանաց Արամ:

- Չարմանալի...: Կարելի՞ է որ մարախը թիթեռնիկէ մը աւելի արագ թոչի: Գիտե՛ս թէ բանի թիթեռնիկ բռնած, յետոյ ազատ արձակած եմ, ըսաւ Արմենունի:

- Թիթեռնիկը ի՞նչ է որ, կը վազես, կը բռնես, ըսաւ Վահան: Կրնա՞ս վազել ճնճողուկի մը ետեւէն: Ծնճողուկը այնքան արագ կը թոչի որ կարծես թէ քար մըն է, որ կը նետուի:

- Տարօրինակ բան. ճնճող՞ուկն է, որ արագ կը թոչի: Հապա ի՞նչ ըսէ բազէն, միջամտեց Յասմիկ: Անկարելի է որ ճնճողուկ մը կարենայ թոչիլ բազէի մը նման: Անգամ մը մեր գիղիկն մէջ բազէ մը տեսայ: Ան այնքան արագ կը թոչէր որ կարծես արծի մը ըլլար...

- Անշուշտ որ բազէն արծի չէ եւ արծիի նման չի կրնար թոչիլ, ըսաւ Վահան, երկու թելերն ալ արծիի նման լայն բանալով: Արծիը ուրիշ է, ո՛չ որ կրնայ թոչիլ անոր նման:

Արմենունի վիրաւորուած այն արտայայտութենէն՝ որ եղբօրը մարախէն եւ իր թիթեռնիկէն աւելի արագ թոչողներ կան, ըսաւ.

- Հապա ի՞նչ ըսել օղանալին, որ արծիէն աւելի արագ կը թոչի, որ մէկ ժամուան ընթացքին լեռներ ու ծովեր կը նուաճէ...:

- Կեցի՛ր այդտեղ: Հիմա դուն չես կրնար բոյ օղանալով

զարմացնել մեզ: Տիեզերանաւը ուրի՛շ է. այնպէս կը թռչի, որ երկինքին մէջ չ'երեւիր, այլ միայն ճերմակ հետք մը կը թողու իր ետեւէն, ըսաւ Վահան, արհամարհական ակնարկ մը ուղղելով իր ընկերներուն վրայ:

- Տիեզերանաւէն աւելի արագ թռչող այ կայ. չէ՞ք գիտեր, ըսաւ Յասմիկ խորամանկօրէն ժպտելով:

- Օրինակ ի՞նչ:

- Օրինակ՝ թնդանօթէն արձակուած ոռմբը: Այդ ոռմբը այնքան արագ կը թռչի որ ո՛չ մէկ հետք կը թողու:

- Թնդանօթէն արձակուած ոռմբը, թէ ոչ պարսատիկի քարը, ըսաւ Վահան հպարտանալով: Դուն նախ ըսէ մեզի թէ ո՞ր տեսած ես թնդանօթը:

- Չե՞ս հաւատար. եկո՛ւր մեծօրս հարցնենք, տեսնենք թէ ան տեսե՞ր է, ըսաւ Յասմիկ եւ վազեց իր մեծօրը մօտ:

- Մեծհայրի՛կ, աշխարհի վրայ ի՞նչ բանն է որ աւելի արագ կը թռչի. օդանա՞ւը, տիեզերանա՞ւը, թէ թնդանօթի ոռմբը:

- Թէ մարախը, միջամտեց փոքրիկն Արամ.

Մեծհայրը նայեցաւ իր շորջ հաւաքուած մանուկներուն, մտածեց, մտածեց ու ըսաւ.


- Աշխարհի վրայ մանկութի՛ւնն է, որ կը թռչի ամենէն արագ:

ԱՐԵՒԱԾԱՂԻԿԸ

Ան այնքա՛ն փոքրիկ էր. այնքա՛ն փոքրիկ ու աննշմար որ ճնճողուկներն իսկ անոր վրայ ուշադրություն չէին դարձներ: Ծիշո՛ւ այն պահուն, երբ արեւածաղիկներու վրայ թառած ճնճողուկները հունտ կը կոցէին, ան, այդ փոքրիկ ու սեւուկ հունտը ինկաւ գետին եւ ո՛չ մէկ ճնճողուկ ափսոսաց անոր անկումին համար: Հունտը շատ տխրեցաւ, վարէն դէպի վեր նայեցաւ, նայեցաւ դէպի արեւածաղիկի գլուխներուն, որոնք կ'այրէին դեղին բոցերով: Նայեցաւ այն հարիւրաւոր հունտերուն, որոնք մնացած էին արեւածաղիկին վրայ, եւ այն ատեն չափազանց առանձին զգաց ինքզինքը: Ո՛չ մէկը պէտք ունէր այլեւս իրեն, ինք հունտերու ամէնէն փոքրիկն էր, անշուքը, իսկ միւսները մեծ էին ու հմայիչ, ձիթապտուղի պէս սեւ ու հիթեղ:

Ծնճողուկները ուրախ-գուարթ կը թռչտէին արեւածաղիկէ արեւածաղիկ: Անոնց այդ շարժումին հետեւանքով աւելի զօրաւոր կերպով կը թափահարուէին ցօղունները եւ հարիւրաւոր հունտեր կ'իյնային գետին, կարծես սեւ արցունքներ ըլլային: Բայց անոնք, գետին ինկած ըլլալով հանդերձ, չէին դադրեր ուշադրութեան արժանանալէ: Մրջիւնները իսկոյն կը հաւաքուէին անոնց շուրջ ու սեւ, հաստ կեղեւով ու գրեթէ պարապ այդ հունտերը միասնաբար կը քաշէին, կը տանէին դէպի իրենց մրջնանոցները:

Փոքրիկ հունտը պառկած էր գետինը եւ կը նայէր դէպի վեր՝ կապոյտ երկնքին, արեւուն՝ որ կը փայփլար երկինքին վրայ, կը նայէր արեւէն ալ գեղեցիկ, կենդանի ու շօշափելի, դեղին, կրակէ մազերով այդ սեւաշեւայ գեղեցիկ արեւածաղիկներուն, եւ կը զգար որ իր սիրտը ուժգին կը բաբախէր: Ան կը մտածէր թէ ինչո՞ւ կը ծնին իրենք, ո՞վ է որ այդպէս ստեղծած է զիրենք, ո՞վ է որ իրենց քնքուշ մարմինը սեւ, կարծր կեղեւով մը պատած է: Չէ՞ որ այդ կեղեւը օգտակար չէ ունէ մէկուն, չէ՞ որ մարդիկ, ճնճողուկները եւ նոյնիսկ մրջիւնները մէկ կողմ կը նետեն այդ կեղեւները: Արդեօք ճիշդ չէ՞ր ըլլար որ այդ կոշտ ու կոպիտ արտաքինին տակ նոյնքան սեւ ու կոպիտ միջուկ մը գտնուէր, եւ կամ ընդհակառակն այդ քնքուշ




միջուկը շրջապատում ըլլար նոյնքան քնքուշ կեղեւով:

Երբ մէկ կողմէ մրջիւնները հունտերը կը կրէին դէպի մրջնանոց, միւս կողմէ փոքրիկ սեւուկ հունտը պատկած էր գետիկը՝ մտատանջութեան մատնուած: Ան կը նայէր բարձրահասակ, սլացիկ, գեղեցիկ արեւածաղիկներուն եւ իր սիրտը սեւ կեղեւին մէջ կ'ուռէր ու կ'ուռէր: Ա'ն ալ կ'ուզէր սչդպիսի արեւածաղիկ մը դառնալ, աճիլ, գորատըր ցօղունի մը վրայ հպարտօրէն ու բարձր պահել իր գլուխը, եւ առաւօտէն մինչէ գիշեր՝ աչքը չհեռացնել արեւէն:

Հունտը կ'երագէր...: Յուզումէն քիչ էր մնացած որ պայտէր անոր սիրտը, բայց սեւ կեղեւը ամբօրէն գոցած էր զայն: Մինչէ ե'րբ ինք պիտի ճշար ներքնապէս, մինչէ ե'րբ պիտի արտասուէր ներքնապէս: Ու բարկութեան, յուսահատութեան, հիացումի, սիրոյ ու ցաւի ազդեցութեան տակ, հունտը այնպէ՛ս ճշաց որ պատեցաւ կեղեւը եւ դուրս ինկաւ ան: Եւ հունտը հասկցաւ յանկարծ որ բնութիւնը իրենց կեղեւ մը տուած է, որպէսզի անոնք որոնք չեն կրնար պատեանի մէջ ապրիլ, պայտեցնեն իրենց պատեանը, իսկ անոնք՝ որոնք կրնան կեղեւի մէջ բանտարկուած մնալ, խաւարի մէջ անցընեն իրենց կեանքը:

Շուտով տեղաց անձրեւ մը, որ իրեն հետ քշեց տարաւ արեւածաղիկի այն բոլոր պարապ հունտերը, որոնք մրջնանոցէն դուրս թափած էին: Բայց աւելի վերջ կրկին շողաց արեւը եւ սերմը երկարեցաւ դէպի արեւ: Ան երկարեցաւ, երկարեցա՛ւ, երկարեցա՛ւ, երկարեցա՛ւ, կանանչ ծիլ մը դուրս ելաւ անոր մէջէն եւ փաթթուեցաւ արեւու ճառագայթին ու երկարեցա՛ւ, երկարեցա՛ւ, երկարեցա՛ւ, երկարեցա՛ւ դէպի վեր:

Օրեր վերջ, ճնճողուկներն ու մրջիւնները մեծ, դեղին, փայլուն արեւածաղիկ մը տեսան հոն՝ ուր ինկած էր փոքրիկ, աննշմար հունտը: Ծնճողուկները կրկի՛ն սկսան կոցել արեւածաղիկի հունտերը, որոնցմէ ոմանք գետին կ'իջնային: Բայց արեւածաղիկը չէր տխրեր, ան գիտէր որ այդ ինկած սերմերէն մէկը կամ միւսը, անպայման պիտի հասկնար որ կարելի չէ ապրիլ կեղեւի մը մէջ բանտարկուած վիճակի մէջ: Ան գիտէր թէ ուշ կամ կանուխ հունտը պիտի պատուէր իր կեղեւը, եւ ահա այն ատեն աշխարհի վրայ պիտի բազմանար արեւածաղիկներու թիւը:



ՄԻԱՌԻ-ՄԻԱՌԻ

Ո՛չ որ տեսած էր այդքան չարանճի մկնիկ մը: Դասերէն կը փախչէր. ամբողջ օրը կը թափառէր մութ նկուղներու մէջ. կը պտտէր կոտրած սեղաններու եւ աթոռներու շուրջ. կը քրքրէր զանազան հիւնցած առարկաներ: Իսկ երբ միւս մուկերը փորձէին զգաստութեան հրաւիրել զայն. ան կը մագլցէր բարձր տեղ մը եւ կ'ըսէր հպարտօրէն.

- Ես բանաստեղծ եմ. ես պէտք է պտտիմ, պէտք է աշխարհ տեսնեմ...:

- Ո՛հ, բանաստեղծ դառնալու համար պէտք է աւելի լաւ ուսում ստանալ եւ ո՛չ թէ թափառիլ. կը խրատէին միւս մկնիկները. բայց ան կը հակաճանդէր. ըսելով.

- Բանաստեղծութիւն գրելը դժուար չէ: Բանաստեղծութիւն գրելու համար բնատուր տաղանդ պէտք է: Այնպէս որ ես այլեւս ուսանելու պէտք չունիմ:

Բայց օր մըն ալ. միւս մուկերը նեղը դրին զայն եւ պահանջեցին որ ան կարդայ իր կողմէ յօրինուած բանաստեղծութիւն մը: Անոնք ըսին միաբերան.

- «Ես բանաստեղծ եմ, ես բանաստեղծ եմ» կ'ըսէս անդադար: Քանի որ բանաստեղծ ես, կարդա՛ որեւէն քու կողմէ գրուած բանաստեղծութիւններէն մէկը եւ մենք ալ տեսնենք թէ ի՞նչ կը գրես:

Մկնիկը կարկամեցաւ, կարմրեցաւ, սկսաւ իր պոչին հետ խաղալ եւ կմկմաց.

Մուկերու աշխարհին մէջ սով կը տիրէր ամէն դի.

Որովհետեւ կը տիրապետէին կատունները լկտի:

Ան երկու տող միայն կրցած էր արտասանել, երբ մուկերը աղմկեցին.

- Խաբէբայ, ստախօ՛ւ, բանագո՛ղ, ասիկա դուն չե՛ս գրած. դուն չե՛ս գրած...:

- Ի՞նչպէս թէ ես չեմ գրած, բարկանալով ոտքը գետին զարկաւ մկնիկը, ո՞վ կրնայ արդեօք այսքան լաւ բնութագրել կատուն. անոր տալով «լկտի» մակդիրը, հէ՛, ըսէ՛ք, ո՞վ...:

- Հոչակաւոր բանաստեղծ մը, հոչակաւոր բանաստեղծ մը, պատասխանեցին մուկերը...

- Խնդրեմ, գրականութեան մասին մի՛ վիճիք ինծի հետ, ձայնը բարձրացուց մկնիկը:

- Բայց դուն ի՞նչպէս կրնաս կատուներու մասին գրել, երբ կատու չես տեսած երբեք, հարցուց տարեց մուկ մը, խնդալով իր պէխին տակէն:

- Բանաստեղծներու համար կարելորդ ո՛չ թէ տեսնելն է, այլ զգալն է, ըսաւ մկնիկը կտրուկ ոճով: Ես կատուները կը ճանչնամ իմ հինգ մատներուս պէս: Դուք կը կարծէք որ այս մութ նկուղէն անդին աշխարհ չկա՞յ: Ես պտըտած եմ դրացի շէնքերու բոլոր նկուղներուն մէջ, եւ ինձմէ սարսափած՝ շրջակայքի բոլոր կատուները հեռացած են այս թաղէն: Կատուները իմ մասին ասացուածք մը իսկ յօրինած են. «Մուկին խաղը՝ կատուին մահն է»:

Բոլոր մուկերը, իրենց ազգակցին մեծամտութեան վրայ այնքա՛ն խնդացին, այնքա՛ն խնդացին որ քիչ մնաց պիտի պայթէին իրենց փորիկները:

Ահա այսպէս՝ մկնիկը խայտառակուեցաւ: Ան նկուղի մը անկիւնը քաշուեցաւ, գտաւ «Անպարարութեան գաղտնիքները» խորագրեալ գիրք մը, եւ սկսաւ կրծել զայն: Ան որոշեց նշանաւոր անպարար դառնալ եւ բոլորը զարմացնել: Հնէ-դէններու մէջէն լայնեզր գլխարկ մը գտաւ, սկսաւ փորձեր ընել, եւ յայտարարեց որ մօտ օրէն ելոյթներ պիտի ունենայ, նոյնիսկ հիրախաղերու պիտի երթայ դէպի միւս նկուղները:

- Անպարար դառնալու համար դուն պէտք է շատ ուսում ստանաս, կրկին խորհուրդ տուին միւս մկնիկները, իսկ դուն հազիւ մէկ երկու էջ կրծեր ես:

Բայց այս անգա՛մ ալ մկնիկը շլսել ձեւացուց զանոնք:

Վերջապէս հասաւ ելոյթի օրը: Բոլոր մուկերը իրենց կիրակնօրեայ հագուստները հագած, հագուած շքուած՝ եկած էին նորայայտ անպարարը տեսնելու: Մկնիկը վրան սեւ վերարկու մը առած էր, իսկ վզին կապած էր թիթեռնիկաձեւ գեղեցիկ փողկապ մը: Ան իր առաջին անպարարութիւնը կատարեց ճարպիկօրէն: Սեւ, լայնեզր գլխարկին վրայ փոեց իր վերարկուն եւ մեղմ ձայնով շշնջաց.

- Պարա՛-մարա՛ն, պարա՛-մարա՛ն, պարա՛-մարան...

Ապա ձեռքի վարժ շարժումով մը ետ քաշեց վերարկուն եւ լայնեզր գլխարկին մէջէն դուրս քաշեց երկար պարան մը: Ան կը քաշէր ու կը քաշէր, իսկ պարանը կարծես ծայր չունէր: Բոլոր մուկերը հիացած էին, կը ծափահարէին ու կը գոչէին.

- Ապրի՛ մկնիկը, ապրի՛ մկնիկը, կեցցե՛ս մկնիկ:

Առաջին յաջողութենէն ոգեւորուած, մկնիկը կրկին վերարկուն տարածեց գլխարկին վրայ, եւ դարձեալ անհասկնալի բաներ շնչաց.

- Թա՛շկի՛ -նա՛շկի, թա՛շկի-նա՛շկի, թա՛շկի-նա՛շկի...

Ապա գլխարկին մէջէն դուրս քաշեց բազմագոյն, տարբեր ձեւերով ու չափերով մետաքսեայ թաշկինակներ, որոնք աշ-նանաւային տերեւներու նման, օդին մէջ երազկոտ շարժումներով կը թռչտէին ու յետոյ կ'իջնային հանդիսատեսներու վրայ: Բոլոր ներկաները ցնցուած էին, քարացած էին իրենց հիացումէն: Յետոյ անոնք ուժգին կերպով ծափահարեցին, գրկեցին մկնիկը ու զայն վեր բարձրացուցին:

Իսկ մկնիկը, իր այս յաջողութենէն քաջաւերուած ու շլացած, փափաքեցաւ ա՛յլ աւելի զարմացնել իր ցեղակիցները: Բայց մե՛ղք որ ան միայն այդ երկու անպարսպութիւնները կրցած էր սորվիլ: Ան կրկին իր վերարկուն փոեց լայնեզր գլխարկին վրայ: Ծատ յուզուած էր, ճակատը ծածկուած էր քրտինքի փոքրիկ կաթիլներով, ձեռքերը կը դողային եւ չէր գիտեր թէ ի՞նչ պէտք էր ընէր: Ան կը պտտէր իր գլխարկին շուրջ եւ անհմաստ ու անկապակից խօսքեր կը շնչար:

- Տիաո՛ւ-միաո՛ւ, տիաո՛ւ-միաո՛ւ, տիաո՛ւ-միաո՛ւ...

Յետոյ, դողդղացող ձեռքերով ետ առաւ վերարկուն: Եւ անա այդ պահուն՝ լայնեզր գլխարկին մէջէն դուրս ցատկեց... թաւամագ, սարսափազդու կատու մը:

- Միաո՛ւ, մոնչեց կատուն եւ առիժի նման նետուեցաւ մկնիկներուն վրայ:

Որքա՛ն իրարանցում ծայր տուաւ, որքա՛ն իրարանցում: Բոլոր մուկերը այս ու այն կողմ վազեցին, վազվզեցին, ծակերէն ներս մտան, պահուրտեցան՝ որքան որ կրնային: Իսկ կատուն, այդքան շատ մուկ տեսնելով զարմացաւ: Ան անգամ մը մէկուն ետեւէն կը վազէր, անգամ մը միսսին: Ծիշդ այդ պատճառով ալ ան ո՛չ մէկը կրցաւ բռնել: Այս մասին՝

փորձառու կատունները պարապ տեղ չեն ըսած. «Այն կատուն, որ երկու մուկի ետեւէ կը վազէ, ո՛չ մէկը կը յաջողի բռնել»:

Այսպէս՝ կատուն վազեց, վազվզեց, յետոյ հեռացաւ՝ յուսահատած ու ձեռնունայն:

Երբ մուկերը հանդարտեցան, դուրս ելան այն ծակերէն՝ ուր պահուրտած էին, եւ հաւաքուեցան մեր մկնիկին շուրջ: Մկնիկը ուշակորոյս՝ ինկած էր լայնեզր գլխարկին մօտ:

Մուկերը շատ չարչարուեցան՝ մինչեւ որ յաջողեցան ուշքի բերել մկնիկը: Մկնիկը երբ աչքերը բացաւ, մրմնջեց.

- Տիտ՛ ու միտ՛ ու, տիտ՛ ու միտ՛ ու...

- Ի՛ ի՛ ի՛նչ, սարսափեցան բոլորը:

Մկնիկը իսկոյն վեր թռաւ իր տեղէն, ձեռքերը դէպի առաջ երկարեց ու ճչաց.

- Այլեւս երբեք պիտի չլսէք տիտու-միտու ձայնը, կը խոստանամ, կը խո՛ւ-տա՛-նա՛մ:

ՃԵՐՄԱԿ ԹՈՒՂԹԸ

Սեղանին վրայ շարուած էին իրարու յար եւ նման ճերմակ թուղթեր: Սկիզբը ո՛չ մէկ ձայն կը լսուէր: Յետոյ լսուեցաւ խշխշոց մը:

- Ինչո՞ւ կ'ըսեն որ ամէն ոք ծնած ատեն կը նմանի ճերմակ թուղթի եւ յետոյ կը դառնայ այն ինչ որ անոր վրայ կը գրէ կեանքը, ինքնիրեն խօսեցաւ թուղթ մը:


- Յայտնի է որ առաջին անգամ է որ թուղթ կը դառնաս, ըսաւ ուրիշ մը. կեանքը հարիւր անգամ ճմոթկած ու նետած է զիս աղբամանին մէջ, բայց ինծի նման գրուած ու մրտած թուղթերը վերամշակել եմ եւ նոր ու մաքուր թուղթեր ձեռք բերեր: Եւ ահա հիմա կրկին գրասեղանին վրայ եմ, եւ ո՛չ ոք գիտէ թէ հիմա ի՞նչ պիտի դառնամ, ո՞վ, ի՞նչ պիտի գրէ իմ վրաս:

- Օրինակ, ես արկածախնդրական գրքէ մը կուգամ, ըսաւ առնական ձայն մը: Դժուար է պատմել թէ արկածախնդրական ի՞նչպիսի կեանք մըն եմ ապրեր: Կրակոցներ, առագաստանաւեր, ծովահէններ ու նաւապետներ, գանձերով լեցուն կղզիներ...: Մէկ օրէն աւելի չէի մնար գրադարանին մէջ: Զիս կը կարդային տուներու, զբօսարաններու, ճամբաներու, ծովեզերեայ վայրերու մէջ: Ես գտնուած եմ ամէն տեղ:

- Իսկ ես թուաբանութեան դասագիրքի էջ մըն էի, խօսեցաւ թուղթերէն մէկը, զիս ալ կը կարդային ու կը կարդային, բայց կարծես բան չէին հասկնար: Չորս աշակերտներու ձեռքը ինկայ, այդ աշակերտներէն մէկն ալ քնանալու ատեն զիս կը դնէր իր բարձին տակ: Քիչ կը մնար որ շնչասպառ ըլլայի:

- Ի՞նչ դժբախտ անցեալ էք ունեցեր, ըսաւ քնքոյշ աղջկան ձայն մը: Կը յուսամ թէ հիմա ամէն ինչ անցած է եւ դուք նոր կեանքի մը կը սկսիք: Ես ալ նոր կեանքի մը կը սկսիմ եւ կը ցանկամ որ իմ վրաս բանաստեղծութիւններ գրեն:

- Ո՛չ, տաղերգութիւն մը, ըսաւ նախկին թուաբանութեան դասագրքի էջը: Թերեւս քու վրադ գրեն այնպիսի բաներ՝ որ ամօթէդ աւելի ճերմկիս:



- Ինչո՞ւ այդպես կ'ըսէք, ըստ կանացի ձայն մը: Կրնայ պատահիլ այնպես որ վրադ գրեն սահուն, գեղեցիկ ձեռագրով եւ դուն ալ ողղակի հալիս հաճոյքէդ: Ես կը սիրեմ՝ երբ կը գրեն գեղեցիկ, քիչ մը շեղ գիրերով, պարբերութիւնները կը սկսին նորոտղէն, մատ մը հեռաւորութենէն եւ անպայման լուսանցք կը ձգեն:

- Ի՞նչ կը գրեն այդքան գեղեցիկ ձեռագրով, ծաղրեց թուղթ մը:

- Կարեւո՞ր է թէ ի՛նչ կը գրեն, զարմացաւ կանացի ձայնը: Կարեւորն այն է որ ամէն ինչ ըլլայ մաքուր, կոկիկ եւ գեղեցիկ ու վրադ նայողը հաճոյք զգայ:

- Արտօնեցէք որ երկու տողով ալ ես իմ կարծիքս յայտնեմ: Հաճոյքով վրադ կը նային միայն այն պարագային, եթէ հաճելի բաներ են գրուած, իսկ ընդհանրապէս մեր կեանքը երկտողի մը նման կարճ է, ըստ նախկին երկտող մը:

- Սարսափելի է, կ'ապրիս, կ'ապրիս, յետոյ քեզ կը յանձնեն թուղթի վերամշակման գործարանը եւ այնտեղէն դուրս կ'ելլես ճեփ ճերմակ, կարծես թէ անցեալ չես ունեցած երբեք, ըստ նոյն քննոյշ աղջկան ձայնը:

- Այնքան տարբեր ենք բոլորս, բայց այնքան հաւասար կերպով չափեր ու ձեւեր են մեզ՝ որ կարծես թէ նոյն անտառին նոյն ծառէն ենք պատրաստուած, խօսեցաւ ճերմակ թուղթը: Իսկ իմ մէջս տակաւին կենդանի են անտառի յուշերը, բոյրերը: Երբ որեւէ թուղթ կը ճմռթկեն, իմ մէջս կ'արթննայ անտառի խշռոցն ու տերեւներու սօսափիւնը: Ես կ'ուզեմ կրկի՛ն ապրիլ տերեւներու նման, անոնց նման ջիղեր եւ երակներ ունենալ, անոնց նման արեւուն տակ փայլիլ եւ անձրեւէն թրջուիլ: Գիտե՞ք թէ ի՛նչ գեղեցիկ զգայութիւն է, երբ անձրեւէն յետոյ վրայէդ մաքուր կաթիլներ կը հոսին, երբ աշնան կարմիր կանաւնչ դեղին, հազար գոյն ստացած տերեւները կը հեռանան ծառէն, եւ անխօս՝ կը հանգչին հողին վրայ:

- Կը հանգչին հողին վրայ, յետոյ զանոնք կը հաւաքեն ու կ'այրեն, ըստ թուղթ մը, խշրտոց յարուցանելով:

- Այո՛, յետոյ կը հաւաքեն ու կ'այրեն եւ դուն կապոյտ ծովի վերածուած կը ձուլուիս երկինքին մէջ, կը լուծուիս օդին մէջ, երազկոտ նայուածքով ըստ ճերմակ թուղթը:

- Ամեն թուղթ պետք է իր մէջը այրէ անտառի յուշերը, այլապէս չի կրնար ապրիլ, ըսաւ դեղնած թուղթը:

- Ի՞նչպէս այրել, չէ՞ որ ինք ալ հետը կ'այրի, զարմացաւ գեղեցիկ ձեռագրի կողմնակից թուղթը:

- Այո՛, այրիլ կարելի չէ, ըսաւ մեղմ ձայնով ուրիշ թուղթ մը: Եթէ այրիք, այլեւս չեն կրնար թուղթ պատրաստել ձեզմէ, կ'այրիք, կը մոխրանաք եւ այլեւս ո՛չ մէկ յուշ կ'ունենաք: Իսկ յուշերը այնքան կարեւոր են կեանքի մէջ որ ...: Կը յիշեմ որ ես ինկած էի մէկուն ձեռքը, որ յուշեր գրի կ'առնէր: Կ'ապրէի հանգիստ ու խաղաղ: Իսկ հիմա ով գիտէ թէ ի՞նչ պիտի ըլլամ: Ահաւասիկ զամբիղը լեցուն է հին ծանօթ-նէրով: Անոնց վրայ մրոտեր են, յետոյ զանոնք ճմուռներ ու նետեր աղբամանին մէջ:

- Բայց ես իմ յիշատակներս ունիմ եւ չեմ ուզեր դառնալ ուրիշ մէկուն յուշը, ուրիշ մէկուն գաղափարը, ուրիշին զգացողութիւնը, ըսաւ ճերմակ թուղթը: Ես կ'ուզեմ ի՛մ կեանքս ապրիլ, ես կ'ուզեմ վերադառնալ անտառ:

- Տեսէ՛ք, տեսէ՛ք թէ որքա՛ն մեծ մեծ կը ջարդէ, ըսաւ ուրիշին յուշերով ապրող թուղթը: Ձեր չափը չէք գիտեր, ուրիշներու հաւասար կտրուած թուղթ էք, բայց դուք ձեզ խոշորացոյցի մէջ կը դիտէք: Եթէ այստեղ հաճելի չի թուիր ձեզի, կրնաք երթալ, պատուհանը բաց է:

- Ես կ'երթամ, ըսաւ ճերմակ թուղթը:

Երեկոյեան հովը սկսաւ խաղալ վարագոյրներուն հետ, ապա խառնշուկեց թուղթերը: Ծերմակ թուղթը երկչոտութեամբ թրթռաց, յետոյ հովին հետ միասին դուրս թռաւ պատուհանէն: Հովը տարաւ զայն, բարձրացուց վեր, ամէն բանէ վե՛ր եւ ճերմակ թուղթը ճերմակ աղանձի նման ճախրեց քաղաքին վրայ:

Հովը զայն քշեց լեռներու ու մարգագետիններու, գետերու եւ ձորերու վրայէն եւ թուղթը երջանիկ էր, չափազանց երջանիկ: Հեռուն՝ կը գտնուէր անտառը: Թուղթը կը վերադառնար իր ծննդավայրը: Ան կարծես թէ կը խենթենար մօտալուտ հանդիպումին ցնծութենէն, կը փաթթուէր հովուն եւ կը վէտվէտէր օդին մէջ: Յետոյ ան անտառին մէջ մարդիկ տեսաւ: Յուրտէն անպաշտպան՝ անոնք փայտ էին հաւաքած եւ կ'ուզէին կրակ վառել: Արդէն կը մթնէր, բայց նախորդ

օրուան անձրեւէն փայտը թրջած էր ու չէր այրեր: Հետզհետէ ւաւելի կը մթնէր եւ մարդիկ շուքեր կը թուէին ըլլալ: Թուղթը մէկ քանի պտոյտ կատարեց անոնց գլխուն վերեւ, վերջին անգամ մը նայեցաւ արդէն խաւարի գիրկը ինկած անտառին, ապա իր մէկ կողմը այնպէս բարձրացուց որ հովը զայն քշեց դէպի փայտի կոճղին կողմը: Ան իջաւ գետին եւ սահեցաւ խոտերու վրայէն: Մէկը վերցուց զայն, ոլորեց, սա-
նած մատներով գրպանէն հանեց լուցկին, թուղթին մէկ ծայ-
րը այրեց եւ զայն խօթեց փայտի կոճղին տակ: Փայտերը բո-
ցաւառեցան եւ լուսաւորեցին խարոյկին շուրջ հաւաքուած
մարդոց դէմքերն ու կոշտացած ձեռքերը: Լոյս եւ ջերմութիւն
տարածուեցաւ ամէն կողմ: Բայց թուղթը չտեսաւ այդ բո-
լորը, միայն թէ ան միջոց մը տեսաւ որ ի՞նչպէս մարդոց
աչքերուն մէջ լոյս առկայծեցաւ, իսկ ինք այրեցաւ ու
մոխրացաւ:

Այս բոլորին մասին ո՛չ մէկ բան գիտցան միւս թուղթերը:
Շուտով սենեակ մտաւ մարդ մը, գոցեց պատուհանը, յետոյ
նստաւ գրասեղանին մօտ, առաւ թուղթ մը՝ եւ գրեց վրան:
Երբ բոլոր թուղթերը մրոտած էին, ան կարդաց, յետոյ
նմոթկեց եւ նետեց զամբիղին մէջ:



ԼՈՂԱԻԱԶԱՆԻ ՄԸ ԼՈՔԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Լոգաւագանի մը յոգարանին մոտ զի կանգնած էի, երբ
ներսէն յտեցի խօսակցութիւններ:

- Ա՛խ ակոսա, վա՛խ ակոսա, կը հառաչէր սանտրը, որուն
ակոսաներէն մէկը կոտորած էր:

- Հերի՛ք մզմզաւ, ըսաւ օճառը, ակոսաներդ չես յուար,
յետոյ գլուխ կը ցաւցնէս. «ա՛խ ակոսա, վա՛խ ակոսա»:

- Քու խօսքերէդ ազդուած՝ մազերս փշաքաղեցան, ըսաւ
ակոսայի խոզանակը: Ի՞նչ է, չե՞ս գիտեր որ սանտրերը իրենց
ակոսաները չեն յուար՝ այն պատճառով որ իրենց համար
ամէնէն կարեւորը ակոսաներն են: Ա՛յ, այս հառաչողէն առաջ
այստեղ որիչ սանտր մը կ'ապրէր, ակոսան կոտորեցաւ եւ
տէրը գայն աղբաման նետեց:

- Ի՛նչպէ՞ս, ակոսայի՞ մը պատճառով, գարմացաւ սանտրը:
Ինչպէ՞ս կարելի է միակ ակոսայի մը պատճառով սանտրը
դուրս նետել:

- Կարելի է եթէ, ստիկա վերջին ակոսան է, ըսաւ ակոսայի
խոզանակը:

- Իսկ դուն ինչպէ՞ս չաչտնուեցար այստեղ, հարցուց սրբիչը
սանտրին:

- Նուիրած եմ զիս, ըսաւ սանտրը:

- Յաչտնի է, չաչտնի է, քսմիծաղով ըսաւ ակոսայի խոզա-
նակը, ինչպէս կ'ըսեն. «նուիրուած սանտրին ակոսաները չեն
համբեր», հի՛, հի՛, հի՛...:

- Ծի՛շո է որ նուիրած եմ ստիկա, արհամարհանքով հար-
ցուց օճանելիքի շիշը, հիմա սա՛նտր ալ կը նուիրեն: Աժան
ազատեր են: Մեր շրջանին միայն արժէքատու օճանելիքներ
կը նուիրէին իրարս:

- Լա՛ւ, լա՛ւ, ինքզինքդ մի՛ գովաբաներ, ըսաւ օճառը: Այս
օճանելիքները այնքան կը յստորուան որ՝ ուր որ է, բար-
կաթեճէս պիտի փոփրիմ:

- Այնքան մի՛ բարկանար, ըսաւ օճանելիքի շիշը: Լոգա-
րանին մէջ դուն քու համեստ տեղդ ունիս: Ուրեմն խելօք

նստե քու տեղդ եւ լո՛ւէ՛:

- Իսկ քու տե՛ղդ ուր է, փրփրեցաւ օճառը:
- Ի՞նչ տեղս, հը՛մ, տակաւին կը հարցնէ: Իմ տեղս հայելիին քովն է, հասկցուեցա՞ւ, ըսաւ օճանելիքի շիշը:
- Ի՛նչ տեղս է որ հայելիին քովն է, ի՛մ, ըսաւ օճառը:
- Ո՛չ, ի՛մ տեղս է, հառաչեց սանտրը:
- Ու՛՛ֆ, ուր որ է պիտի ցնդիմ, գլուխը բռնեց օճանիքի շիշը:
- Այ կը բաւէ որքան վիճեցաք: Անշուշտ այսպիսի տխմար վիճաբանութիւններ կ'ընէք, եթէ ամբողջ օրը այսպէս հայելիին առջեւ պարապ պարապ պտտիք, ըսաւ սպունգը:
- Ո՞վ է խօսողը, հարցուց օճանելիքի շիշը, ո՞վ է այդ առարկան:
- Սպունգն է, չե՞ս գիտեր, ըսաւ ակոսայի խոզանակը. ճիշդ է որ անոր տեսքը այնքան լաւ չէ, բայց ան շատ աշխատասէր ու ազնիւ սպունգ մըն է:
- Ընկերնե՛ր, եկէք խաղաղօրէն ապրինք, պէտք չէ իրարու սիրտ կտորենք, ըսաւ լոգարանը հնչելոյ ձայնով:
- Առաջին անգամ ա՛ն էր որ սկսաւ, ըսաւ օճանելիքը:
- Ո՛չ ա՛ն էր որ սկսաւ, ըսաւ օճառը:
- Չիս ալ վիրաւորեց, աւելցուց սպունգը:
- Թող ձեր վէճը հայելին լուծէ, առաջարկեց լոգարանը. ան ամէնէն արդարն է:
- Ես իրականութիւնն է որ կը ցուցնեմ, ըսաւ հայելին: Տարբեր ձեւով չեմ կրնար շարժիլ: Ես բաւական ատենէ ի վեր կ'ուզէի ցոյց տալ այն ինչ որ ուրիշներ չեն տեսներ ձեր մէջ. կ'ուզէի ձեզի ցոյց տալ այնպէս՝ ինչպէս պէտք է ըլլաք դուք, բայց անկարելի է ատիկա: Այդ պատճառով ալ ես իմ ամբողջ կեանքիս մէջ տառապած եմ, ապրած եմ կտորած սրտով...:
- Հայելին յուզուեցաւ: Թեթեւ շոգի մը եկաւ ծածկել իր մակերեսը, եւ արցունքի երկու կաթիլներ, փայլուն հետք մը ձգելով սահեցան անոր վրայէն:
- Իսկ դո՛ւմ գոնէ մէկ անգամ չե՞ս կրնար մեզի ցոյց տալ այնպէս՝ ինչպէս մենք կ'երազենք ըլլալ, հարցուց ջուրի ծորակը:
- Ա՛խ ակոսա, վա՛խ ակոսա, կը շարունակէր հառաչել սանտրը:

- Շա՛տ կը խնդրենք, հայելի, գոնէ մէ՛կ անգամ մեզի ցոյց տոր մեր մանկութեան երազանքը, մեզ ցոյց տոր այնպէս՝ ինչպէս կ'երագէինք ըլլալ, խնդրեց լոգսրանը.

- Ատիկա հնարատր է միայն այն պարագային, երբ բոլորդ համերաշխութեամբ սպրիք իրարու հետ եւ մոռնաք սեւիական ցար, իրարու մէջ փնտռէք գեղեցիկն ու բարին, ըլլաք ազնիւ ու մաքուր, եւ փոքր վէճերու բնթացքին կրբէք չմոռնաք ձեր երազանքները.

- Ձե՛նք մոռնար, չե՛նք մոռնար, իսկոյն շարունակեցին սանտրն ու ակոսայի խոզանակները:

- Այլեւս չենք վիճաբանիր իրարու հետ, խոսուցան օճառն ու օճանելիքը:

- Լաւ, ըսաւ հայելին, բայց մի մոռնաք որ ձեր այս խոստումէն վերջ՝ ձեզի համար դժուար կ'ըլլայ իրականութեան վերադառնալ: Որուն որ երազանքը գոնէ մէկ անգամ կատարուի, ան յատեժօրէն կ'ապրի չուշերու եւ երազանքի մէջ: Ձեմ գիտեր թէ այնուհետեւ դուք ինչպէ՞ս կը նայիք հայելիին մէջ: Դուք սրտորա՞ստ էք...:

- Այո՛, ըսին բոլորը:

- Լաւ, այդպէ՛ս թող ըլլայ, ըսաւ հայելին:

Յանկարծ, սաստիկ հովուն ազդեցութեամբ բացուեցաւ աւազանին դուռը: Ես վազեցի դէպի աւազան եւ դրան մօտ զարմանքէս քարացայ: Իմ առջեւ կ'այլևկոծէր անծայրածիր ծով մը: Ամեհի ալիքները հորիզոնի մանիշակագոյն հեռաւորութենէն իրարու յաջորդելով, անդադար գալարուելով, իրարու առջեւ իյնալով, կուգային ու կը փշրուէին նիշդ դրան մօտ, ոտքերուս առջեւ: Փշրուած ալիքներու ջրի կաթիլները կը խաղային օդին մէջ, կ'առկայծէին ստարեր գոյներով եւ կը զարնուէին երեսիս: Ալիքներու փրփուրը կը լուսար ծովեզերքի խճաքարերն ու աւազը, օճառն էր ստիկա, որուն փրփուրներուն հազարատր մեծ ու փոքր պղպշակները անվերջ կը ծնէին ու կը պայթէին, կը ծնէին ու կը պայթէին: Կատարուած էր նաեւ ցնցուղին երազանքը: Հեռուներէն, կասպոյտ մշուշներէն անդին, կարծես թէ ցնցուղէն չորդաւատ անձրև կը թափէր, որուն կաթիլները կարծես կը ծակծկէին շնչառութեամբ բարձրացող եւ իջնող ծովուն անպարփակ կործքը: Սպունգները քույսայ քույսայ, ամպերու նման կը

լողային երկինքին մէջ: Ջորին ծորակը աղբիւր էր դարձեր, որմէ սառնորակ ջորի կաթիլներ կը բխէին եւ հոսելով կը խառնուէին ծովու ջորերուն: Իրականացած էր նաեւ օծանելիքին երազանքը: Հովը կը փշէր անհուններէն եւ ծովու անկրկնելի բոյրեր կը տարածէր: Իսկ արագանի շախնասալերը ծովային խեցիներ դարձած, սփռուած էին ամբողջ ծովեզերքին վրայ: Սանտրերը վերածուած էին ծովային ոզնիներու, իսկ ակռայի խոզանակները՝ երկարապոչ ձկնիկներու:

Հեռուն, ալիքներու գազաթին վրայ կը տեսնուէր ճերմակ անագաստանաւք: Ո՛չ որ գիտէր որ յոգարանն էր ստիկա: Առագաստներու վերածուած արբիչները հովու ազդեցութենէն կ'ուռէին ու դէպի անչաչտ հեռուները կը տանէին նաւք:

Ես չանկարծ նայեցայ հաշելիին մէջ եւ տեսայ որ տասնրհինգամեայ նաւապետն այ ե՛ս էի:


ԿՐԻԱՆ

Ամէն ոք տուն ունէր, միայն կրիան էր որ չունէր: Իսկ առանց տան դժուար է ապրիլ այս աշխարհի վրայ: Եւ կրիան հաւաքեց կոյր ու ողորկ քարեր ու իրեն համար կառուցանեց փոքրիկ տուն մը, որուն մէջ ան հազիւ կը տեղաւորուէր: Բայց կարենոր չէր, տուն էր վերջապէս եւ այդ տունը անձրեւէն, հովէն ու ցուրտէն կը պատապարէր զինքը: Առաւօտուն շատ կանուխ կ'ելլէր տունէն ու կ'երթար սնունդ հայթայթելու: Արեւը դեռ նոր ծագած, ան արդէն ճամբայ ելած կ'ըլլար: Ամբողջ օրուան ընթացքին կը թափառէր լեռներու ու մարգագետիններու մէջ եւ իրեն համար կեր կը փնտռէր. իսկ ճիշդ այն ատեն, երբ արեւը մայրը պիտի մտնէր, ան, ինչպէս բոլոր օրինաւոր կենդանիները, դէպի տուն կը փութար: Բայց տունը հեռու էր եւ խեղճ կրիան մութ գիշերով, լուսնի լոյսով սարեր ու ձորեր կ'անցնէր, կը կտրէր դաշտ ու անտառ եւ առաւօտեան դէմ՝ յոգնած ու անօթեցած կը հասնէր տուն: Առաւօտուն պէտք էր կրկին երթար սնունդ ճարելու. եւ ան դարձեալ ճամբայ կ'իջնար: Անձրեւին ու հովին, ցուրտին ու տաքին, կրիան դուրսն էր: Ի՞նչ օգուտ որ տուն ունէր ան:

Եւ կրիան յոգնեցաւ այս կեանքէն: Մաշեցաւ, տկարացաւ, նիհարցաւ, ուժասպառ եղաւ: Դիւրի՞ն էր օրերով չքնանալ:

Ու օր մըն ալ, կրիան որոշեց իրեն հետ տանիլ իր տունը, ուր որ երթար: Ասիկա անշուշտ շատ խելացի որոշում էր: Ան իր ձեռքերն ու ոտքերը հանեց պատուհաններէն, գլուխը՝ դունէն, եւ սկսաւ քայլել իր տան հետ: Ծատ դժուար էր այս տեղափոխութիւնը, եւ այդ պատճառով կրիան կը քայլէր դանդաղօրէն: Իսկ ո՞վ կրնար իր տունը առած իր վրայ՝ քայլել արագօրէն: Ո՛չ ոք:


Այսպէս՝ կրիան շատ լաւ կը զգար ինքզինքը: Ան միշտ իր տան մէջ էր, բայց նաեւ տան մէջ չէր: Երբ անձրեւ տեղար կամ փտանգ մը սպառնար, ան գլուխը, ձեռքերն ու ոտքերը ներս կը քաշէր եւ ահա՛ ան իր սեփական տան մէջ էր: Միայն կար կարենոր պարագայ մը, որ հաճելի չէր. կրիան չէր կրնար հիւր կանչել իր տունը, նոյնիսկ իր ծննդեան օրը, որովհետեւ



իր տան մէջ հագի ի՛նքն էր որ կը սեղմէր: Բայց միւս կողմէ
ալ լա՛ւ էր որ նեղ էր իր բնակարանը, որովհետեւ երբեք գող
չէր կրնար մտնել իր տունը: Իսկ երբ կրիան հիւր երթար
որեւէ տեղ, ան ինքզինքը կը զգար իր սեփական տան մէջ եւ
ո՛չ մէկը յարմար կը նկատէր իրեն ըսել:

- Դուք ձեզ զգացէք ձեր տան մէջ:

Բայց պէտք է խոստովանիլ որ հազուադէպօրէն իբր հիւր կը
կանչէին կրիան: Ո՛ր տեսնուած է որ մարդ իր տունն առած
երթայ ուրիշի տունը: Ահա այդ պատճառով ալ կրիան
ընկերներ չունի եւ միշտ տխուր է ու առանձին:



ԾՆՆԴԱՎԱՅՐ

Ուղտը տրտում տխուր կը քալէր անտառին մէջ: Ան ընկճուած հոգեվիճակի մէջ, ծուած էր իր վիզը ու արցունքները հատիկ հատիկ կը հոսէին անոր խոշոր, ջիւնջ ու թախժոտ աչքերէն:

- Ի՞նչ պատահեցաւ, ինչո՞ւ կու լաս, կ'երեւի կորսուած ես, հարցոց սկիւռը, ուղտը տեսնելով:

- Ո՛չ, չեմ կորսուած. միայն թէ շատ կարօտցած եմ իմ հայրենիքս այլեւս չեմ դիմանար, կ'երթամ այնտեղ. պատասխանեց ուղտը:

- Կ'երեւի թէ քու հայրենիքդ շատ գեղեցիկ է որ այդքան կարօտցած ես:

- Օ՛, իմ հայրենիքս ինձի համար դրա՛խտ է, դրա՛խտ, աշխարհի ամէնէն լաւ տեղն է:

- Ամէնէ՞ն, ամէնէ՞ն, հարցոց սկիւռը:

- Այո՛, ամէնէն, ամէնէն, ամէնէն լաւ տեղը, պատասխանեց ուղտը:

- Չեմ գիտեր, քայց կրնայ պատահիլ որ ե՛ս ալ քեզի հետ գամ, ըսաւ սկիւռը մտահոգուած: Այստեղ խիստ ձանձրալի է ինձի համար: Կեանքիս լաւագոյն տարիները կ'անցընեմ բոյնիս մէջ: Ամբողջ ամրան ընթացքին կ'աշխատիմ մէկ երկու կաղին ձեռք ձգելու համար, որպէս ձմրան ուտելիք: Ո՛ւղտ, հոն ուր կ'սպրիս դուն, ձմեռ կը տիրէ՞:

- Չմե՞ռ, զարմացաւ ուղտը, ի՞նչ կ'ըսես դուն: Չմեռն ի՞նչ է: Աշունն նոյնիսկ չի տիրեր. միշտ ամառ է այնտեղ:

- Միշտ ամա՛ռ...: Ռերեմն տուի որոշումս. քեզի՛ պիտի ընկերանամ, ըսաւ սկիւռը ու իր ճիղէն ցատքեց ուղտին սապատին վրայ:

Անոնք կը քալէին անտառին մէջ, երբ հանդիպեցան նապաստակի մը:

- Բարե՛ւ, սկիւռ, ո՞ւր կ'երթաս այսպէս, հարցոց նապաստակը:

- Կ'երթամ ուղտին հայրենիքը, արագ արագ խօսեցաւ սկիւռը:

- Ի՞նչպէս է ուղտին հայրենիքը:

- Հի՛, հի՛, ծիծաղեցաւ սկիւռը, չե՞ս գիտեր, հոն իսկական դրախտ մըն է: Դրա՛խտ... ճիշդ կ'ըսես չե՞, ո՛ւղտ:

- Այո՛, այնտեղ իսկական դրախտ է ինձի համար, երազկոտ ձայնով պատասխանեց ուղտը:

- Լեզու՛դ ցոյց տուր ուրեմն որ հասկնամ թէ չես խաբեր, ըսաւ նապաստակը:

Ուղտը ցոյց տուաւ իր լեզուն:

- Իսկ հիմա աչքերուս մէջ նայէ, տեսնեմ թէ ճի՞շդ կ'ըսես, դարձեալ պահանջեց նապաստակը:

Ուղտը վիզը ծոնց լաւ իր մեծ, ազնիւ ու պարզ աչքերով նայեցաւ նապաստակին աչքերուն մէջ:

- Այո՛, այնպէս կ'երեւի թէ չես խաբեր, ըսաւ նապաստակը ականջները շարժելով. ուրեմն ես ալ կուզամ ձեզի հետ: Արդէն ձանձրացայ ամբողջ օրը տեղէ տեղ փախչելէ, հազար ու կադամբ կրծելէ: Թո՛ւ, երբ կը յիշեմ այդ անտէր հազարն ու կադամբը, կը ցանկամ երթալ փոռիլ ծառին տակ, մինչեւ որ աղուէսը գայ եւ ուտէ զիս ու ես ազատիմ այս անիծեալ կեանքէն:

Նապաստակը միացաւ անոնց եւ անոնք՝ երեք ընկերակիցներ, շարունակեցին իրենց ճամբան: Ծամբու ընթացքին սկիւռը անմիջապէս նկատեց իրեն ծանօթ ճնճողուկը, որ նստած էր ծառի ճիւղին վրայ:

- Է՛յ, ճնճողուկ՝ի՞նչ կ'ընես, եկուր մեզի հետ: Եկուր երթանք ուղտին հայրենիքը:

- Ի՞նչ կայ այնտեղ, հարցուց ճնճողուկը:

- Նայէ՛ թէ ի՞նչ կը հարցնէ: Կը հարցնէ թէ ի՞նչ կայ այնտեղ, ծաղրեց սկիւռը: Ի՞նչ է, կը կատակե՞ս: Նապաստա՛կ, եկուր բացատրէ անոր թէ ի՞նչ կայ ուղտին հայրենիքին մէջ:

- Օ՛, ուղտի հայրենիքի՛ն մէջ, այնտե՛ղ, այնտե՛ղ... կմկմաց նապաստակը, մէկ խօսքով՝ իսկական դրախտ մըն է, կը հասկնա՞ս, դրա՛խտ:

- Ես այստեղ ծնած եմ եւ այստե՛ղ ալ հաճելի է ինձի համար, պատասխանեց ճնճողուկը:

- Լաւ ուրեմն, եթէ այստեղ հաճելի կը թուի քեզի, հաւու պէս թառէ այդ չոր ճիւղին վրայ, ըսաւ սկիւռը չարացած:

- Եկուր եւ այս ճնճողուկներուն բարի՛ք գործէ, կը կրկնէր սկիւռը շարունակ՝ ամբողջ ճամբու տևողութեան: Ես զայն

դրախտ կը տանիմ, իսկ ան ձեւեր կ'առնէ, կը հարցնէ թէ ի՞նչ կայ այնտեղ, ի՞նչ չկայ: Ան միւս թոշուններուն նման չի չուեր տաք երկիրներ: Չեմ գիտեր թէ ի՞նչ կը հասկնայ այս չոր ու ցամաք անտառին մէջ: Է՛հ, տեսէք թէ ովքեր են որ թելեր ունին, ովքե՛ր: Ո՛հ, եթէ ինձի՛ տային ճնճողուկի թելերը, կը թոշէի հեռո՛ւ հեռո՛ւ տեղեր եւ այլեւս չէի վերադառնար երբեք:

Այսպէս անոնք դուրս ելան անտառէն եւ իրենց ճամբան շարունակեցին մարգագետիններու վրայէն: Ուղտը այնքան մտազբաղ էր որ չանդրադարձաւ թէ ի՞նչպէս ինկաւ փոսին մէջ: Այդ պահուն, մէկ քանի գորտեր իսկոյն տարբեր կողմեր ցատքեցին: Գորտերէն մէկը, որ միւսներէն հեռու թռած էր, տրտնջաց.

- Ինչո՞ւ առջեւդ չես նայիր. ձեր նմաններուն պատճառով օր ու արեւ չունինք մենք: Յանկարծ կը տեսնես որ կով մը կամ հորթ մը կուգայ եւ չը՛լըմփ, կ'իյնայ փոսին մէջ: Անցեալ տարի քիչ մնաց որ այժ մը ճգմէր գիս:

- Ներողութիւն, գորտ եղբայր, ըսաւ ուղտը, ես տուն կը վերադառնամ, կը հասկնա՞ս, խելքս ու միտքս այնտեղ է, իմ հայրենիքիս վրայ...:

- Իսկ դուն գիտե՞ս որ անոր հայրենիքը դրախտ է, դրա՛խտ, ըսաւ սկիւռը: Հ՛ը. դուն ո՞րկէ պիտի գիտնաս, թէ դրախտն ի՞նչ է:

- Դրա՛խտը, գիտե՛մ անշուշտ, ըսաւ գորտը: Կրնա՞մ ես ալ միանալ ձեզի: Այստեղ ապրիլ հնարաւոր չէ այլեւս: Կը պատահի որ օր ցերեկով խոզ մը գայ, մխրճուի ջուրին մէջ եւ անչագօրէն խմէ ամբողջ ջուրը: Այդ պարագային՝ կեանքդ փրկելու համար ստիպուած ես դրացիիդ փոսին մէջ նետուիլ:

Այսպէս անոնք չորս հոգիով շարունակեցին իրենց ճամբան: Ծատ գացին, քիչ գացին, անցան դաշտերէ, լեռներէ, ձորերէ, ընդարձակ տափաստաններէ, եւ վերջապէս սակաւախօս ուղտը ըսաւ.

- Համբերութի՛ւն, բարեկամներ, քիչ մնաց, շուտով կը հասնինք:

Մէկ քանի ժամ վերջ, անոնք կեցած էին հսկայ անապատի մը եզրը:

Ուղտը անչագօրէն կը շփէր անապատի տաք օդը ու իր

աչքերէն երջանկութեան արցունքներ կը հոսէին:

- Արդեօք ա՛յս է դրախտը, այս անծայրածիր յիմարութի՛ւնը, զայրացաւ սկիւռը:

- Ես չեմ հասկնար թէ ի՞նչ տեսակ դրախտ է հոս, երբ ճահիճներ, փոսեր ու մժեղներ չկան, հարցուց գորտը զարմացած:

- Փոսերն ու ճահիճները մէկ կողմ թողունք. դուք չէք տեսներ ամէնէ՛ն կարեւորը: Այստեղ ո՛չ խոտ կայ, ո՛չ կաղամբ, չկարողացաւ ինքզինքը զսպել նապաստակը. ասիկա իսկական խաբէրայութի՛ւն է: Ես արդէն առաջին օրէն կասկածներ ունէի, համոզիչ չէի գտներ կատարուած խոստումները: Ի՞նչպէս չամչցաք, երբ աչքերուս մէջ ալ նայեցաք:

- Դուք նկատեցի՞ք որ այստեղ ո՛չ մէկ խոռոչ կայ, ըսաւ սկիւռը շուարած:

- Այլ ո՞ր կը մնայ խոռոչը, երբ այստեղ ո՛չ միայն ծառ, այլ նոյնիսկ հազարի կոթ անգամ չկայ, բորբոքեցաւ դարձեալ նապաստակը:

- Հանգստացէ՛ք, սիրելիներս, ըսաւ ուղտը, այստեղ մեզ ուղտերուս համար իսկական դրա՛խտ է, հաւատացէ՛ք ինձի, ես ձեզ չեմ խաբած: Այս ալիք ալիք աւազներուն նայեցէ՛ք անգամ մը. կարծես ոսկեհատիկ ծով մը կայ ձեր առջեւ, այնպէս չէ՞:

- Այո՛, այնպէս է, ծաղրեց գորտը: Ո՛ր որ է այդ ջուրին մէջ պիտի նետուիմ ու լողամ...:

- Ջո՞րը ըսիք դուք, հարցուց ուղտը: Ո՞ր կայ այնքան մաքուր, զուլայ անապակ ջուր, որքան կայ մեր ջրհորներուն մէջ: Այդ ջրհորներուն հասնելու համար քսան օրուան ճամբայ պէտք է կտրես, բայց այդպիսի ջուրի համար ես պատրաստ եմ քառասուն օր ծարաւ մնալու: -

- Աչքիս առջեւէն հեռացուցէ՛ք այս ծուովիզ հրէշը, այլապէս չեմ գիտեր թէ ի՞նչ փորձանք կ'ելլէ ձեռքէս, յիսորտաց գորտը:

- Չշարժի՛ս տեղէդ ուղտ, այդպէս լաւ է, թէ ոչ արեւը կ'այրէ մեզ, գոչեց նապաստակը որ պատուպարուած էր ուղտին շուքին տակ:

- Արե՛ւը, ի՛մ արեւը, անապատի՛ արեւը, ըսաւ ուղտը իր հիացումէն յուզուելով: Այսպէս մեծ, նարնջագոյն արեւ ուրիշ

ո՞ր կրնաք գտնել: Այս արևը ամբողջ տարուան ընթացքին կը տաքցնէ մեզ եւ անապատին մէջ ձմեռ չի՛ տիրեր երբեք:

- Արդեօք խօսքը միայն ձմրա՞ն մասին է, գայրացաւ սկիւոր: Եթէ կ'ուզէք գիտնալ, ըսեմ թէ ձմեռն ալ իր հրապոյրներն ունի: Օրինակ՝ ես ձմրան ամբողջ տետողութեան, կակուղ խոռոչիս մէջ նստած՝ կաղին եւ ընկոյզ կ'ուտեմ:


- Իսկ ես կը փոխեմ իմ մորթս, կը դառնամ ձիւնաթոյր ճերմակ, այնքան ճերմակ, որ ձիւնին վրայ նոյնիսկ հարազատ մայրդ քեզ չի կրնար տեսնել, ըսաւ նապաստակը: Կ'արժէ տեսնել թէ ինչպէ՛ս կը թոչտինք ձիւնին վրայ, կը վազենք, կը վազվզենք, կեղծ հետքեր կը թողունք մեր ետին, յետոյ թուփի մը տակ թաքնուած՝ կը ծիծաղինք յիմար աղուէսին վրայ:

- Իսկ ես, ցորտերը սկսելէն անմիջապէս ետք, իսկոյն կ'իջնեմ ջուրին յատակը, կ'ընկղմիմ տիղմի մէջ ու կը քնանամ, մինչեւ որ գարուն գայ, ըսաւ գորտը ու փռուեցաւ աւազներուն վրայ, ցոյց տալու համար թէ ի՛նչպէս կը քնանայ ամբողջ ձմրան ընթացքին:

- Է՛, ի՛նչ օրերու հասանք, հառաչեց նապաստակը: Հիմա անտառին մէջ ամէն ոք հաճոյքի պահեր կ'ապրի, իսկ մե՞նք...

- Քանի ուշ չէ, պէտք է վերադառնալ, ըսաւ սկիւոր: Ես կարօտցալ մեր անտառը, իսկական դրախտը այնտե՛ղ է:

- Այո՛, իսկական դրախտը այնտե՛ղ է, այնտե՛ղ, կրկնեցին սկիւորին հետ գորտն ու նապաստակը, եւ երեքն ալ բռնեցին տունդարձի ճամբան...: Անոնք քանի կը յառաջանային, այնքան կ'արագացնէին իրենց քայլերը:



ԹՌԻՉՔ

Այնքա՛ն լաւ էր. այնքա՛ն լաւ: Ծառերու կանանչ կանանչ, մեծ ու փոքր, լայն ու նեղ, հիւթեղ ու մետաքսի նման նուրբ, թափշէ տերեւներուն վրայ կ'ապրէին բազմաթիւ թրթուրներ: Անոնք կը կրծէին տերեւները, կը կրծէին ու կը կրծէին, եւ այնպէս կը թուէր թէ իրենց այս շարժումը անսպառ է ու անվերջ: Ամէն ծառի տերեւ իրեն յատուկ համն ու հոտն ունէր եւ թրթուրները այդ համ ու հոտէն, այդ բոյրերէն արբեցած՝ կը կրծէին ու կը կրծէին: Այնքա՛ն լաւ էր. այնքա՛ն լաւ...: Անոնց միջեւ կաշին տարբեր տեսակի թրթուրներ ալ: Ծերեր ու երիտասարդներ, գէրեր ու նիհարներ, խելացիներ ու չիմարներ: Ծերերը կը մտածէին որ քիչ մնացած է իրենց ապրելու ժամանակը եւ կը կրծէին աւելի ազափօրէն: Գիրուկները կը կրծէին, որպէսզի աւելի գիրնասն, նիհարները կը կրծէին որ նիհար չմնան, խելացիները կը կրծէին, որովհետեւ չիմար չէին որ չկրծէին, իսկ չիմարները ...: Յիմարներ չկաշին: Այո՛, ո՛ր չիմարը կը հրաժարէր այդ դրախտային կեանքէն: Իսկ տերեւները այնքա՛ն համեղ էին ու հիւթեղ որ թրթուրները ժամանակ չէին կորսնցներ կրծելու այդ տերեւները:

Բայց օր մը, երբ թեթեւ գեպիւղ օրօրեց տերեւները, թրթուրներէն մէկուն՝ երիտասարդ, նիհար թրթուրի մը սիրտը սկսաւ աւելի արագ բաբախել: Ան դադրեցաւ կրծելէ, կը ճօճուէր տերեւին հետ եւ հիացած՝ կը նայէր իր տակը գտնուող պատկերներուն, հազարագոյն ծաղիկներուն, այդ գոյները կը լեցուէին իր աչքերուն մէջ, գլխու պտոյտ կը պատճառէին եւ այդ կափ-կանանչ տերեւները, անոնց կանանչ հիւթը, թրթուրներու կանանչ աչքերը, կանանչ կաշուն արհնր, ամէ՛ն ամէն ինչ անոր անկատար կը թուէր, անցողական ու ժամանակաւոր: Եւ ան կը շարժէր տերեւներուն հետ, կը շարժէր ու կարծես սիրտը կը փրթէր իր տեղէն ու կը թռչէ՛ր...: Մեծ թրթուր մը տեսնելով գայն, իր կրծոտած տերեւին վրայէն ըսաւ անոր.

- Հէ՛յ, գործո՛վ զբաղէ: Պարապ պարապ օրօրուելով փոր

չես կրնար կշտացնել:

Երիտասարդ թրթուրը սթափեցաւ, շարունակեց կրծել, բայց կրկին կանգ առաւ, իր տերեւէն վար հայեցաւ ու կրկին անոր աչքերուն մէջ ցոլացան գոյնզգոյն ծաղիկները եւ անոր աչքերը լեցուեցան բազմաթիւ գոյներով...:

Այս անգամ ալ ծեր թրթուրներէն մէկը հայելով անոր, ըսաւ.

- Ո՞հ որքա՛ն երիտասարդ է: Դեռ գլուխը կը շարժէ աջ ու ձախ. կե՛ր ա՛յ տղայ, կե՛ր, որ շուտ մեծնաս:

- Իսկ եթէ շուտ մեծնամ, այն ատեն ի՞նչ կը պատահի, հարցուց երիտասարդ թրթուրը:

- Ի՞նչպէս թէ ի՞նչ կը պատահի, զարմացաւ ծեր թրթուրը: Եթէ մեծնաս, շատ կ'ուտես:

- Իսկ եթէ շատ ուտեմ եւ շատ մեծնամ, այն ատեն ի՞նչ կը պատահի, կրկին հարցուց երիտասարդ թրթուրը:

- Եթէ շատ մեծնաս, այն ատեն գրեթէ ինծի չափ կ'ուտես: Այսինքն դժուար թէ կարողանաս ինծի չափ ուտել: Ես այս ծառին ամենանշանաւոր ուտողն եմ, ըսաւ թրթուրը, ինքնագոհ փորը ուռեցնելով, բայց նկատելով միւսներուն ծուռ նայուածքները, ատելցուց ատելի ճիշդ՝ ես ամէնէն նշանաւոր ուտողներէն մէկն եմ...:

- Իսկ ես չեմ ուզեր ամէնէն նշանաւոր ուտողներէն մէկը դառնալ, ըսաւ երիտասարդ թրթուրը:

Ամէն ոք խնդաց:

- Այս երիտասարդ թրթուրը հաճելի կը թուի ինծի, ըսաւ դրացի տերեւի վրայէն խոշոր թրթուր մը: Լսեցի՞ք: Ան չ'ուզեր նշանաւորներէն մէկը ըլլալ: Ան կ'ուզէ ամենալաւ ուտողը դառնալ: Ապրի՛ս. կարելորը ձգտումն է: Կարելորը, նպատակ ունենալն է, մե՛ծ նպատակ:

- Դուք զիս սխալ հասկցաք, ըսաւ յուզուած ձայնով երիտասարդ թրթուրը: Ես... ես չեմ ուզեր իմ ամբողջ կեանքս վատնել միայն ուտելով, ես... ես յոգնած եմ ուտել:

- Տեսէ՛ք, յոգնե՛ր է, զայրացաւ ուրիշ թրթուր մը, իսկ քու տեղդ ո՞վ պիտի կրծէ: Ծատ երես ատեր ես: Երբ ես քու տարիքդ էի, գարուն էր այն ատեն, ծառերը գրեթէ մերկ էին, մանր մունր տերեւներ կային: Ի՛նչ դժուար օրեր անցուցած եմ: Իսկ հիմա, փառք Տիրոջ, ամբողջ օրը կե՛ր ու կեր եւ չի

վերջանար: Կե՛ր, կրժե՛, հաճոյք վայելէ...:

- Ես չեմ ուզեր կրժել միայն, ընդդիմացաւ երիտասարդ թրթուրը:

- Հապա ի՞նչ կ'ուզես. տերեւի վրայ այդպէս պառկիս ու օճի՛ս:

- Ո՛չ, ես կ'ուզեմ թռչիլ, կ'ուզեմ թռչիլ, ըսաւ երիտասարդ թրթուրը գրեթէ լացակումած ձայնով:

- Ինչո՞ւ կրնան թռչիլ հասարակ մժեղը, բզէզն անգամ, իսկ մենք չենք կրնար...:

- Է՛հ, հառաչեց ծեր, չորցած կոնծած թրթուրը: Հին խօսք մը կայ, որ կ'ըսէ. «Ով որ ծնած է սողալու համար, ան չի կրնար թռչիլ»: Օրէ՛նք է ասիկա:

- Ինչո՞ւ ձեր ուշադրութիւնը կեդրոնացուցած էք այդ թրթուրին վրայ, բարկացաւ ուրիշ հաստափիզ թրթուր մը: Ինչո՞ւ ժամավաճառ կ'ըլլաք...:

Բոլոր թրթուրները օրօրեցին իրենց գլուխները եւ սկսան կրժել աւելի եռանդով:

Բայց երիտասարդ թրթուրը շարունակեց պառկած վիճակի մէջ մնալ տերեւին եզերքը եւ այնտեղէն նայիլ դէպի վար: Որքա՛ն գեղեցիկ էին ծաղիկները: Որքա՛ն անուշաբոյր: Թրթուրը ամբողջ գիշեր, չքնացաւ: Ան պառկած էր կոնակի վրայ, կը նայէր աստղերուն ու սիրտը կ'ուռէր: Տերեր կ'օրօրուէր մեղմիկ, իսկ ան իր աչքերը կիսովին գոցած էր եւ այնպէս կ'երեւակայէր թէ կը թռչէր, կը թռչէր գոյնզգոյն ծաղիկներու ու դաշտերու վրայէն, եւ կարծես թէ ինք կ'ապրէր ծաղիկներու թերթերուն վրայ, անոնց օրօրուն բաժակներուն մէջ:

Երիտասարդ թրթուրը անդադար կը մտածէր թռիչքի մասին: Ան նոյնիսկ մէկ քանի անգամ փորձեց թռչիլ, բայց հագի թէ ինկաւ մէկ տերեւէն միւսին վրայ:

Բայց օր մըն ալ երբ ան կրկին կը փորձէր թռչիլ, տերերը ծռեցաւ ու ան ինկաւ ծաղիկներուն մէջ: Այն ծաղիկէն, որուն վրայ ինկած էր թրթուրը, փրթան երկու թերթիկներ: Թրթուրը գմայլանքով այդ թերթիկները ամբացուց իրեն եւ փորձեց թռչիլ: Սկիզբը չէր կրնար, ան մի՛այն ծաղկէ ծաղիկ կը թռչէր: Յետոյ թեթեւ գեփիւոնն հետ աւելի բարձր թռաւ, հասաւ իր տերեւին եւ թարթելով իր քնքոյշ թերերը,

պտտեցաւ անոր շորք, թոստ անցաւ դաշտերէն...:


Այդ օրէն ի վեր անոր ետեւէն բազմաթիւ թրթուրներ թելեր
առին ու թոսան: Եւ որպէսզի այդ թրթուրները զանազանութիւն
միասնէրէն, զանոնք կոչեցին թիթեռ:

Վ Ա Յ Ր Է Ջ Ք

Դարեր առաջ, հատերը ազատօրէն կը ստատունէին երկինքին մէջ, կը թռչէին դաշտերէն, անտառներէն, բլուրներէն ու լեռներէն ա՛լ ատի թարձր, դանդաղ պտոյտներ կը կատարէին կիրճերու ու անդունդներու վրայ, ապա կը ճախրէին վե՛ր, վե՛ր, անվերջանալիօրէն դէպի վեր: Անոնք սեւ էին ու ճերմակ, բծաւոր ու նախշուն: Ունէին կրակի լեզուակներու նման փոքրիկ կատարներ: Այդ կատարները հատերու գլուխներուն վերեւ կարմիր թագերու տեսքը կը պարզէին: Աննկարագրելիօրէն գեղեցիկ էին անոնք: Կարծես բազմագոյն ծաղկեփունջեր էին, որոնք կը սուրային օդին մէջ հովերուն հետ պար բռնած, ազատ ու անկասելի, սրբնթաց ու ինքնամոռաց: Մարդիկ երբ տեսնէին զանոնք, հիացումէ արբեցած, երկա՛ր, երկա՛ր կը նայէին կապոյտ երկնքին, մինչեւ այն ատեն, երբ հատերը գոյնզգոյն ներկելով երկինքը, կ'անհետանային հորիզոնին միւս կողմը: Մարդիկ այնքան սիրեցին այդ հատերը, որ սկսան բոլոր թռչունները «հաւ» անուանել:

Իսկ հատերը կը ճախրէին ինքնամոռաց, իրենց հազարագոյն փետուրները կը ծածանէին օդին մէջ եւ ո՛չ մէկ մտահոգութիւն կ'ուզէին ունենայ: Անոնք կ'երթազէին անհոգ ու ազատ ապրիլ միշտ, բոյն չհաստատել ո՛չ ծառերու վրայ, ո՛չ թուփերու տակ, ո՛չ արտերու մէջ եւ ոչ ալ տուներու տանիքներուն վրայ:

Բայց անկարելի էր ապրիլ առանց սնունդ ճարելու եւ բոյն շինելու: Եւ օր մըն ալ անոնք որոշեցին երթալ մարդոց մօտ: Խորհեցան որ այսպէս շարժելով իրենք բոյն չեն շիներ, ճութիկներ չեն պահեր, ուտելու եւ խմելու մասին չեն մտածեր: Մարդիկ կը հոգան ամէն ինչ, իսկ իրենք կ'ըլլան կատարելապէս ազատ, իսկակա՛ն ազատ: Այո՛, առօրեայ հոգերէ ձերբազատելու միակ միջոցը ա՛յս էր: Ուստի անոնք որոշեցին խումբերով իջնել մարդոց տուներուն բակերը: Անոնք գործադրեցին իրենց որոշումը եւ իջան մարդոց մօտ: Մարդիկ երբ տեսան զանոնք, շատ ուրախացան, հաւնոցներ



շինեցին, կերակրեցին զանոնք, կեր տուին, հացի փշրանքներ, ջուրի փոքրիկ ամաններ դրին անոնց առջև:

Հաւերը իրենք զիրենք չափազանց երջանիկ կը զգային: Այլեւս ո՛չ մէկ հոգ ունէին: Պէտք չունէին տեղ փնտռելու՝ գիշերելու համար. պէտք չունէին տեղէ տեղ թոշելու՝ սնունդ որոնելու համար: Մարդիկ կը հսկէին, որպէսզի գիշատիչներ յանկարծ վնաս չհասցնեն իրենց: Անոնք նոյնիսկ հաւերու նուտերուն խնամքն ալ ստանձնած էին: Մէկ խօսքով՝ կե՛ր. խմե՛ ու պտտե՛:

Հաւերը այդպէս կ'ընէին: Կ'ուտէին, կը խմէին, ամբողջ օրը ազատ համարձակ կը պտտէին բակին մէջ ու գիշերը կը քնանային տաք հաւնոցին մէջ: Անոնք թոշելու ցանկութիւն չունէին քնաւ. ո՛ր թոշէին եւ ինչո՞ւ: Արդէն ամէն ինչ ունէին, ամէն ինչ մօտ էր իրենց: Ապահով կեանք կը վարէին: Ուրեմն ի՞նչ պէտք ունէին ազատ ըլլալու:

Անոնք զաղտնաբար կը ծաղրէին նոյնիսկ արծիւները, որոնք կրնային թոշիլ բարձրերէն եւ իրենց զօրաւոր թելերուն լայն բացուածքով ծածկել արելը: Բայց անոնք տնական առօրեայ հոգեր ունէին, բոյն կը շինէին ժայռերու, խարակներու անմատչելի ծերայերուն մէջ, հակիթ կ'ածէին, յետոյ օրն ի բուն կը խնամէին իրենց ձագուկները: Աւելի լաւ չէ՞ր ամբողջ օրը տիրաբար սաւառնիլ անդունդներու վրայ եւ արքայական բարձրութենէն նայիլ մրջիկներէն ա՛լ աւելի պզտիկ երեւոյց մարդոց ու անասուններուն:

Հաւերը կը ծաղրէին նաեւ արագիւկները:

- Որո՞ւ համար է որ կը չարչարուիք այդպէս: Աշնան կը չուէք տաք երկիրներ: Կ'արժէ՞ մէկ քանի ամսուան համար բոյն հիւսել: Ո՛վ գիտէ. կրնայ պատահիլ որ յաջորդ տարի գաք ու ձեր բոյնը քանդուած գտնէք: Ինչո՞ւ կը չարչարուիք պարապ տեղ, ինչո՞ւ չէք արժեցներ ձեր ազատութիւնը: Ո՛հ, ո՞րքե՛ պիտի գիտնաք թէ ի՞նչ է ազատութիւնը:

Հաւերը ծիծեռնակներուն ալ խրատ կուտային:

- Բոյն կը շինէք մարդոց տուներու տանիքներուն վրայ եւ փոխանակ ապրելու մարդոց հաշուոյն, փոխանակ սնանելու մարդոց տուածով, առաւօտէն մինչեւ իրիկուն կը վազէք մժեղներու ետեւէն: Որքա՛ն յիմար զբաղում: Դուք չէք գիտեր թէ ի՞նչ է ազատութիւնը:

Այսպէս՝ հաւերը սկսան ապրիլ մարդոց մօտ, կերան, խմեցին, գիրցան եւ իդոտեցան: Բայց անոնք ժամանակի ընթացքին այնքա՛ն գիրցան որ՝ օր մըն ալ տեսան որ այլեւս չէին կրնար թոշիլ: Իսկ ամէնէն կարելորը՝ անոնք այլեւս թոշելու ցանկութիւնն ալ կորսնցուցած էին: Ուրախ կ'անցնէր անոնց օրը, բայց անոնք միայն կը կտկտային ու աղբերը կը քրքրէին:

Երբեմն, աշնան ու գարնան, երբ երկինքին մէջ կը տարածուէին գաղթող թռչուններուն հրածեշտի կանչերն ու վերադարձող երամներու ուրախ աղմուկը, հաւերը իրենց ցանկապատուած հաւնոցներէն կը նայէին ազատօրէն նախրող թռչուններուն, պահ մը կը ցանկային միանալ անոնց: Այն ատեն փոշի բարձրացնելով կը թափահարէին իրենց թելերը, բայց իսկոյն յիշելով իրենց հաւնոցները, իրենց տրուած կերերն ու անկիւնը դրուած ջրամանը, կը հրաժարէին իրենց այդ գաղափարէն:

ԱՐՋՈՒԿԸ

Արջուկը արթնցաւ իր բունէն, մոթմոթաց, շուրջը նայեցաւ, բայց չտեսաւ իր մայրը: Մտածեց որ ան որսի գացած է: Արեւը ծագած էր արդէն եւ անտառի թռչունները ուրախ զուարթ կը ճոռողէին, ճիւղէ ճիւղ կը թռչտէին ու կ'աղմկէին: Ան անկողնին մէջ փոխեց իր դիրքը, ուզեց դարձեալ քնանալ, բայց չկարողացաւ: Կկուի ձայնն էր որ առաւելաբար ազդեցութիւն կը գործէր իր վրայ:

Կկուն կը կանչէր կո՛ւ-կո՛ւ, կո՛ւ-կո՛ւ, կարծես ժամացոյց ըլլար: Արջուկը աչքերը բացաւ գոցեց, կրկին բացաւ ու գոցեց, բայց բունը չտարաւ: Ոտքի կանգնեցաւ, գլուխը դռնէն դուրս հանեց եւ գոռաց.

- Ի՞նչ կայ որ այդքան կ'աղմկէք, չէ՞ք տեսներ որ տան մէջ քնացած արջուկ կայ:

Ճնճողուկները արջուկին վրայ ուշադրութիւն չդարձուցին եւ շարունակեցին աղմուկ բարձրացնել, այնպիսի աղմուկ մը որ խեղճ արջուկը չհամբերեց այլեւս.

- Չէ, այնպէս կ'երեւի որ իմ որսի երթալու ժամանակը եկած է: Կը բաւէ որքան նստայ տան մէջ: Այսօրուրնէ կը սկսիմ որսի ելլել եւ առաջին առթիւ ճնճողուկներու կեանքին վերջ կուտամ:

Այս մտածումով տարուած՝ արջուկը իր թաթիկները շփելով մտածեց թէ ի՞նչ ընէ:

Մտածեց, մտածեց ու հնարը գտաւ. պէտք էր կացին սունել ու անտառ երթալ՝ ճնճողուկներուն թառած ծառը կտրելու: Ճնճողուկները ծառին հետ հասուն տանձերու նման վար կը թափէին, իսկ ինք կրնար բոլորը ճաշակել...: Այստետեսն ճնճողուկները թող համարձակէին իր բունը խանգարել:

Արջուկը կացինը առաւ եւ շնչասպառ՝ վազեց ծառին մօտ: Ճնճողուկները կը շարունակէին ուրախ զուարթ ճոռողել: Արջուկը սկսաւ կացինով զարնել ծառին, բայց առաջին իսկ հարուածով ճնճողուկները թռան եւ թառեցան միւս ծառին վրայ: Արջուկը գաղտագողի մօտեցաւ այդ ծառին եւ հազիւ թէ իր կացինը պիտի բարձրացնէր ծառին զարնելու համար.



ճնճողուկներու ամբողջ խումբը համերաշխօրէն թուաւ եւ նստաւ քովի ծառին վրայ: Արջուկը վազեց քովի ծառին մօտ, բայց ճնճողուկները թուան միւս ծառին վրայ:

Արջուկին բարկութիւնը չափ ու սահման չունէր: «Պէտք է ծառը յանկարծակի կերպով, անակնկալօրէն կտրել, որպէսզի ճնճողուկները չկարենան փախչիլ» մտածեց ան: Բայց ատիկա ալ անհնար էր:

Յետոյ արջուկը մտածեց որ ամէնէն ճիշդը կ'ըլլայ նախ եւ առաջ կտրել ճնճողուկներու նստած ծառին շրջակայքը գտնուող բոլոր ճիւղերը: Այսպէս անոնք փախչելու տեղ չէին ունենար: Ան իսկոյն յարձակեցաւ մօտակայ ծառին վրայ եւ սկսաւ կացինով հարուածել: Ծիշոյ աչոյ պահուն, վերէն ձայն մը լսեց.

- Հէ՛յ, ո՞վ ես, ի՞նչ ես, որ փայտփորիկի նման գլուխ կը բռնես: Սեփական բոյնի մէջ ալ չեն թողուր որ հանգիստ մնաս:

Արջուկը շատ զարմացաւ, վեր նայեցաւ եւ տեսաւ որ ծառին խոռոչէն կլու մը իր գլուխը դուրս է հանած եւ զայրոյթով իրեն կը նայի:

- Հիմա ծառդ կը կտրեմ, կը հասկնաս թէ ո՞վ եմ, յոխորտաց արջուկը:

- Ծառ կտրողին նայեցէ՛ք, քու նմաններուդ շատ ենք հանդիպած: Ամէնուն ալ հաշիւը մաքրած ենք: Անոնք ալ կ'ուզէին կլուի բոյն քանդել, բայց ստացան իրենց բաժինը:

- Կլուի բո՞յն, զարմացաւ արջուկը, ամբողջ աշխարհ գիտէ որ կլուները բոյն չունին եւ իրենց հաւկիթները կ'ածեն ուրիշներու բոյնին մէջ: Իսկ իրենք կը ձգեն ու կ'երթան:

- Ատիկա քեզի դպրոցին մէ՞ջ են սորվեցուցած, ըսաւ կլունը քմծիծաղով:

Արջուկը թէեւ դպրոց չէր երթար, բայց ինքնահաւանութեամբ ըսաւ.

- Այո՛, դպրոցին մէջ են սորվեցուցած:

- Եւ դուն կը կարծես որ կլուները բոյն չունի՞ն:

- Այո՛, չունին, ըսաւ արջուկը:

- Ի՞նչ է, դո՞ւն լաւ գիտես, թէ ոչ Յովհաննէս Թումանեանը, արհամարհանքով հարցոց կլուն:

Արջուկը պահ մը շփոթեցաւ: Չէր գիտեր թէ ի՞նչ

պատասխանէր, յետոյ զայրացած ըսաւ.

- Ո՞վ է տեսեր որ որսը վիճաբանի որսորդին հետ:

- Դո՞ւն ես որսորդը, կրկին ծաղրեց կկուն: Հէ՛յ որսորդ.

«Չարին Վերջը» կարդացա՞՞ծ ես:

- Կարդացած եմ, հպարտացաւ արջուկը:

- Եթէ կարդացած ես, արտասանէ՛:

Կար լեռ մը,

Լեռան վրայ ծառ մը,

Ծառին վրայ խոռոչ մը,

Խոռոչին մէջ բոյն մը,

Բոյնին մէջ երեք ձագ,

Եւ վրան կկու մը ...:

- Ա՛յ, կը տեսնե՞ս. «Բոյնին մէջ երեք ձագ ու վրան ալ կկու մը» ըսիր, ուրեմն կկուները բոյն ունին եւ իրենց ձագուկներն ալ կը խնամեն, ըսաւ կկուն: Հիմա կորսուէ՛ այստեղէն: Քիթը չի կրնար սրբել, ծառ կտրելու ելեր է...:

Արջուկը գլխիկոր հեռացաւ եւ սկսաւ շրջիլ անտառին մէջ:

- Խելացի արջուկը այդ կկուներու եւ աղմկարար ճնճողուկներու մակարդակին չ'իջներ, կը մոթմոթար ան: Ես որսո՞րդ եմ, թէ ճնճողուկ բռնող: Աւելի լաւ է որ երթամ լճակին մօտ ձուկ որսալու: Չուկերը գոնէ չեն խօսիր եւ իրենց հարցերով գլուխ չեն ուռեցներ:

Բայց արջուկը չէր գիտեր թէ ի՞նչպէս պէտք էր երթալ լճակին մօտ:

Անակնկալ զուգադիպութեամբ մը ան հանդիպեցաւ սկիռիկին ու ճամբայ հարցուց.

- Ատկէ աւելի դիրին բան կա՞յ, պատասխանեց սկիռիկը, ինձի պէս թոչէ ծառէ ծառ, ճիղէ ճիղ եւ շուտով կը հասնիս լճակին մօտ:

Արջուկը դժուարութեամբ բարձրացաւ սկիռիկին ծառին վրայ: Սկիռիկը թուաւ միւս ծառի ճիղին վրայ եւ ըսաւ.

- Հիմա իմ ետեւէս եկուր, ես քեզի ճամբան ցոյց կուտամ:

Արջուկը սկիռիկին ետեւէն թուաւ դէպի միւս ծառին ճիղը:

- Ծը՛ն, ձայն հանեց ճիղը:

- Ի՞նչ, հարցուց արջուկը:

- Ծը՛ն կ'ըսեմ, կրկնեց ճիղը ու կտրեցաւ:

Արջուկը գետին գլորեցաւ:

- Այսպէ՞ս կ'երթան լճակին մօտ, ըստ գորտը, յայտնուելով արջուկին դիմաց:

- Իսկ ի՞նչպէս կ'երթան, խեղճուկ ձայնով հարցուց արջուկը:

- Շատ դիրին է, պատասխանեց գորտը: Կարելոքն այն է որ ձեռքեր ու ոտքեր ունենաս, մնացեալը դժուար չէ: Նայէ՛ ինձի: Պառկէ՛ փորիդ վրայ, ապրի՛ս, հիմա ինձի նման ետեւի ոտքերով դէպի առաջ նետուէ՛ ու ցատկէ՛, դէպի առաջ նետուէ՛ ու ցատկէ՛, նայէ՛ ճի՛շդ ինձի պէս:

Արջուկը պառկեցաւ փորին վրայ, ետեւի ոտքերով դէպի առջեւ նետուեցաւ որ ցատկէ, բայց հագիւ թիզ մը կրցաւ յառաջանալ:

- Է՛ եղբայրս, ըստ գորտը, դուն այս գործը չես կրնար ընել, լիճ չես կրնար հասնիլ:

Բարեբախտաբար այդ միջոցին անոնց մօտէն կ'անցնէր բադերու խումբ մը:

- Բադիկներ, այս արջուկը ձեզի հետ լճակին մօտ տարէք, խնդրեց գորտը, խեղճը ցատկել չի գիտեր բնաւ:

- Կ'երեւի թէ ծարաւցած ես, հարցուցին բադերը:

- Ո՛չ, ես որսորդ եմ, կ'երթամ ձուկ որսալու, հպարտացաւ արջուկը:

- Ո՛չ թէ որսորդ, այլ ձկնորս: Իսկ դուն ձուկ բռնա՞ծ ես բնաւ, հարցուցին անոնք:

- Ձուկ բռնելը դժուար չէ, պատասխանեց արջուկը: Անոնք ծանէ ծառ չեն թռչիր:

Արջուկը բադերուն ետեւէն գնաց լճակին մօտ: Բադերը ուրախ աղմուկով ջուրին մէջ մտան ու լողացին: Արջուկը քիչ մը զբօսնեցաւ լճափին մօտ, յետոյ ան այ ջուրը մտաւ, բայց քանի մը քայլ հագիւ առած էր՝ երբ լճակը խորացաւ եւ քիչ մնաց խեղդամահ ըլլար ան: Արջուկը ձեռքերն ու ոտքերը կը թափահարէր, օգնութիւն կը կանչէր, ջուր կը կլլէր, կրկին օգնութիւն կը կանչէր, մինչեւ որ բադերը օգնութեան փութացին եւ հագար դժուարութեամբ զայն ցամաք հանեցին:

- Քանի որ լողալ չես գիտեր, ինչո՞ւ ջուրը կը մտնես, զայրացան բադերը:

- Ո՛հ, լճակը այնքան խորունկ չէր, հագիւ կը ծածկէր ձեր տոտիկները, արդարացաւ արջուկը:

- Է՛հ, Է՛հ, ըսին բաղերը: Քեզմէ ձկնորս դուրս չի գար:

- Ինձի՞ կ'ըսէք ատիկա: Հիմա պիտի տեսնէք թէ ի՞նչպէս ձուկ պիտի որսամ, յոխորտաց արջուկը: Հիմա լճակին ջուրը կը պարպեմ եւ ջուրին յատակէն կը հաւաքեմ ձուկերը, իսկ դուք ձեզի համար նոր ջրափոս փնտռեցէք, որովհետեւ գիտցէք որ այստեղ լճակ պիտի չըլլայ այլեւս:

Բաղերը ծիծաղեցան արջուկին վրայ եւ կրկին ջուրը մտան: Իսկ արջուկը սկսաւ երկու թաթիկներով լճակէն ջուր առնել եւ դուրս թափել: Ան մինչեւ իրիկուն անընդհատ թաթիկներուն մէջ ջուր կը լեցնէր ու դուրս կը թափէր, բայց լճակը չէր պարպուեր:

Արդէն մութը իջնելու վրայ էր, իսկ արջուկը ո՛չ որս էր բռնած եւ ոչ ալ ձուկ: Բոլոր կենդանիները վերադարձած էին իրենց տաքուկ բոյները: Ձուկերն անգամ ձանձրացան արջուկին վրայ խնդալէ եւ լողացին դէպի լճակին խորերը:

Արջուկը թրջած էր ու անօթեցած, տխուր էր ու միմակ: Լալու պահանջք ունէր: Ան ինքզինքը առանձին կը զգար ամբողջ անտառին մէջ, ամբողջ աշխարհի մէջ, եւ արցունքները կը հոսէին իր աչքերէն ու հատիկ հատիկ կը կարծէին լճակին մէջ:

Վերջապէս ան սրբեց իր աչքերը եւ գլխիկոր վերադարձաւ տուն, ուր մայրը մտահոգուած՝ իրեն կը սպասէր:

Եւ ճամբան խեղճ արջուկը կը մտածէր թէ դեռ որքա՛ն պիտի ծաղրեն զինքը, թէ որքա՛ն պիտի խնդան իր վրայ, մինչեւ որ ինք շատ բան սորվի: Խորհեցաւ որ դեռ որքա՛ն պէտք է տանջուի ու չարչարուի, մինչեւ որ փոխանակ սովորական արջուկի, սովորական արջ դառնայ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վեճը

7-9

Արժանի թագաւորը

11-13

Կօշիկները

15-17

Ի՞նչն է, Որ Կը Թոշի Ամէնէն Արագ

19-20

Արեւածաղիկը

21-23

Միառ - Միառ

25-28

Ծերմակ թուղթը

29-33

Լողաւազանի Մը Լոգարանին Մէջ

35-38

Կրիան

39-41

Ծննդավայր

43-47

Թոիչք

49-52

Վայրէջք

53-56

Արջուկը

57-62

ISBN 975-7265-02-0



9 789757 265023

